Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳԱՍՏԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՏԱՐԻ Ե· | ՀԱՏՈՒԱԾ ՀԱՆԴԷՊԱՐԵՔ | ԱՊՐԻԼ 1894 Թ·

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

1· ՓՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ	105	Ա· Տ··Մ·
2· ՊՈԱԿԻ Ս· ԽՈՐՀՈՒՐԴԸ · ·	107	Ա· Տէր-Մկրտչեան·
3· Ի՞ՆՉ ՊԷՏՔ Է ԿԱՐԴԱԼ ԵՒ ՊԱՏՄԵԼ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ · ·	113	Ղ· Ս· Գ·
4· ՈՒՍՈՒՑԻՉԸ ԻԲՐԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ· ԳՈՐԾԻՉ·	116	*Եղիշէ Թոփչեան·*
5· ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍ·	120	*Սահակ վ· Ամատունի·*
6· ՀԱՅԿԱԿԱՆՔ · · · · ·	128	*Մխաբան·*
7· ՓԱՂՈՒԾՔ ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ· ՀԱՅՐԱՊԵՏԻ · · · · ·	130	· · · · · · · ·
8· ՓԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ · · · ·	133	· · · · · · · ·
9· ԻՄԱՍՏԱՒԻՑ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ·	136	· · · · · · · ·
10· ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ · ·	—	· · · · · · · ·

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԽԳ—1894·

ՀՐԱՏԱՐԱԿԻ

Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄՐԲԱԶԵՆԱԳՈՅՆ ԿԱՊՈՒՂԻԿՈՄԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹՒԹԻ· ԻԷ· ՏԱՐԻ· ՀԱՅՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԱՓԷ· ԱՊՐԻԼ 1894 Թ·

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ ԻՒՄԵՌԵԼՈՑ»·

«ԵԹԷ ՅԱՐՏՈՒԱԾ ԸՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՊԱՍ ԶՎԵՐՒՆԴԸՆ ԽՆԴՐԵՑԻՔ»...

Կող· Գ· 1·

Ընչ մեծ աւելաւք կայ, որ առաւել ուրախացուցիչ լինի քան այս երկնային ձայնը· կա՞մ մի իրողութիւն աւետարանական պատմութեան մէջ, որ այնքան և անսահման բարիքներ բերած լինի մարդկութեան համար· քան այն, որ արտայայտուած է այդ խօսքերում: Քրիստոս՝ Աստուծոյ Որդին՝ յարեաւ մեռելներից· Քրիստոս՝ Աստուծոյ որդին՝ իւր մահով մահը ջախջախեց· Քրիստոս՝ Աստուծոյ Որդին՝ իւր յարութեամբ մեզ կեանք պարգեւեց: Ահա աքանչելիք աքանչելեաց· ահա աւետարանական յաւուրջափիմութեան անշեղ առանցքը:

Աստուած մարդացաւ· մարդացեալ Աստուածը մեռաւ· Աստուածամարդը յարեաւ և կենդանացուց այն մարմինն որ մինչեան աշխարհի կատարածի ժամանակ պէտք է յառնէ: Պեռաւ նաև որ միութիւն է խակական կեանքի և մարմնոյ· կենդանացաւ նորա հետ նաև որ հողէր և հոգ պէտք է դառնար:

Հաղարաւոր տարիներ դադար մարդկութիւնն իւր ոչնչութիւնը մեղքերի անդունդի մէջ· «Անցեայն կեանք մեր իբրև զհետս ամպոց···: Զի անչք աստուածի են կեանք մեր···»*: այս էր նորա կեանքի գաղափարը: Բայց ահա

* Ի մաս· Սոզ Բ, 5·

ժամանակը լրացաւ· մարդկութիւնը խոնարհուեց և իւր յոյսը միմիայն Ամենակալողի վրայ դրաւ՝ հաւատքով առ Նա գարձած· եւ կաւ Աստուած և անցաւորութեան մէջ թաւալող մարդուն մտանակից արաւ իւր փառքին։

Մինչդեռ առաջ իւր անցաւոր ոյժերով հակառակորդը հպարտանում էր «իվերայ ամենայնի, որ անուանեալ իցէ Աստուած կամ պաշտօն»,* շատ չանցաւ և այժմ իւր վերջ կութիւնն հայեցեց Նորանից որ «ի պատկեր իւրոյ բարերարութեանն արար զնա»։

Ասպրէ՛ և կատանաս, բաղխէ՛ և քո առաջ կբացուի փրկութեան դուռն, այս եղաւ այնուհետև մարդկութեան Փրկչի պատուիրանն առ իւր հաւատացեալը։

Դու Հայ մարդ, միթէ այսով չես առաջնորդւում և դու· և ճր բանխմացը կլինի անուղղայ անթիւ խրատներից յետոյ· ո՞ւմ սիրտն է թանձրացել և ո՞ւմ ականջները խլացել, որ չզգան այդ և չլսեն աստուածային ձայնի ճշմարտութեան։ Անցան գնացին կայեհները, նոքա այլ ևս չեն դառնալ· կենդանութեան ջրի այն կողմն են սևաթոյր այծերը, մինչդեռ սրբուել են աստուածային ջրով ս· Լուսաւորչի սպիտակափայլ գառները։

Լոյս է Հայաստանեայց ս· Եկեղեցու հովանու տակ· բայց աւազ· ցերեկուան հետևում է և գիշեր,** որ առանց գայթակղութեան չէ թողնում մարդուն և միթէ պակաս կլինի այն պարարութիւնն, որ առանց փորձանաց է փայլում· կարո՞ղ է պարծենալ պինուորն, եթէ իւր սենեակի մէջ է շաղացնում իւր թուրը։

Ահա և դուք, մանկունք պինուորեալք Հայաստանեայց ս· Եկեղեցու· խաւարի դէմ մաքառելով պէտք է շողշողայ ձեր արդարութիւն։ Սակայն դուք ևս մարդ էք և չեն կարող ձեր արիութեան և առաքինութեան պնդքերը պահուիլ մեզայ խոնաւութեան ժամերից· ուստի և ահա եօթը շաբաթ ժուժկալելով դիմիչ ուսեսանելից ու խմիչքներից և ապականիչ շատախօսութիւնից և մրցքերից, ջանացիք մաքրել ձեր պնդքերը, վասընդի նիւթական պնդքը իւղով է մաքրւում մինչդեռ հոգևոր պնդքը բարեպաշտութեամբ և հաւատքով։

Դուք ձեր հոգին անցուցիք առաքինութեան ծերպերով և սրեցիք, սակայն կատարեալ միայն Աստուած է և Նա է որ քննում է մեր սրտի խորքերն և ներելով մեր մարդկային թուլութիւններն, ողջագուրում է մեզ հայրական սիրով ու մեզ կեանք պարգևում իւր անսպառ կենդանութիւնից։ Ուրեմն խոնարհուեցէք, ձեր ոյժից շատ վեր բան էք խընդրում։ Այն որ չէք կարող ձեր անցական ոյժերով ձեռք բերել՝ Ամենակալողից էք սպասում։ դուք յարութիւն, փրկութիւն էք խնդրում մեղքերի ժանգերից և յաղթական զօրութիւն ձեր պնդքերի համար։

Յեանո՛ւմ էք· Քրիստոս մեռաւ ու թաղուեց ձեր մահացուցիչ մեղքերն և յառնելով կեանք է տալիս ամենքին, որոնք միանում են նորա հետ։ Նորա աստուածային յարութիւնը ձեր մարդկային յարութիւնն է։

Քանի ուրեմն բերկրալի ձայն է՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», որ հրաւիրում է ձեզ՝ հաւատքով խոնարհութեամբ և հեզութեամբ մօտենալ և հաղորդուիլ Նորա անմահութեան բաժակին ու կցորդ լինել Նորա փառքին, և այս պրաւական է հանդերձեալ անշէջանելի կենաց։

«Ձեր հաստատեալ պհիմունս Սիոնի, և նովաւ փրկեալին խոնարհք ժողովրդեանն»։*

Ձեր Նոր-Սիոնը, Հայաստանեայց կաթուղիկոսն, Ս· Էջմիածինը հնչեցնում է լսելու ընդունակներին համար իւր ձիւղաւորութեան բոլոր ս· դասերում աստուածային քաղցր ձայնը·

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Ա· Տ·-Մ·։

* Բ· Թես. Բ, 4։

** Ծով. ԺԱ, 9, 10։

* Ես. ԺԹ, 32։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊՍԿԻ Ս. ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Շարունակութիւն *)։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ։

Հայաստանեաց ս. Եկեղեցին հաստատուած է Քրիստոսի փրկարար վարդապետութեամբ, նորա խորհրդաւոր սրբարարութիւններն ևս պէտք է ծագին անպատճառ այդ վարդապետութեան սկզբունքներից։ Պսակը ս. խորհուրդ է և պսակադրութիւնը խորհրդաւոր սրբագործուածն, ուրեմն և նորա հիմունքը պէտք է սուրբ լինի. եթէ պսակադրութեան արարողութիւնը հակասէ Աւետարանին, եթէ արարողութեան սկզբունքին հակասէ գործնական վարդապետութիւնն, երկու դէպքումն էլ կլուծուի այդ ս. խորհրդի նշանակութիւնն ու երջանկացուցիչ ներգործութիւնը։

Արդ՝ պսակադրութեան մէջոցին ասւում է. «Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ և եղիցին երկոքեան ի մարմին մի։ Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ»։

Եւ աղօթւում է. «Տէր Աստուած յաւիտենական, որ զանզոյգս և զնախորշեալս զուգակցես միաւորութեամբ, և կապես անքակտելի . . . . . օրհնեա զծառայս և զաղախինս քո . . . »։

Այնուհետև քահանան խոստովանեցնում է նոցա, որպէս զի եթէ ունեն հաւատքի թուլութիւն և այնպիսի մեղքեր, որոնք նոցա անընդունակ են դարձնում այդ աստուածային օրհնութեան, զղջան և խոստանան ապաշխարել և քաւել։ Նախ քան պսակի թոյլտուութիւնը քննում են, որ արտաքին արգելքները (չհասութիւն, անչափահասութիւն և այլն) չլինին, իսկ այժմ միասարերը կարող են լինել ներքին անուղղութիւններն, որոնք օտարացնում հեռացնում են մարդուն թէ Աստուածանից և թէ նորա ս. օրհնութիւնից։ Ներքին վէրքերը կարելի է միայն խոստովանութեամբ, պսակուողների կամեցողութեամբ և անձնուիրութեամբ բուժել, ուստի և քահանան դիմում է նոցա, զարթեցնում է նոցա խիղճն և դրդում՝ զղջալ և մաքուր հոգով ու սրտով մտնել սիրով կապուած այն օրհնութեան տակ, որ արժանաւորներին երջանկացնում է, իսկ անարժաններին՝ իբրև տկար անօթների՝ պայթեցնում։ Այստեղ արդէն ապագայ բախտաւորութեան կամ անբախտութեան պատճառն ինքեանք պսակուողներն են։

Ցետոյ քահանան դիմում է դէպի նոցա ասելով. «Տեսէք որդեակք, աստուածային հրամանաւն ևկանոնիւք ս. Հայրապետացն եկեալ էք ի ս. եկեղեցիս պսակիլ օրինօք ի սուրբ ամուսնութիւն, Աստուած զձեզ միաբան սիրով պահեսցէ, ի խոր ծերութիւն հասուսցէ և անթառամ պսակին արժանացուսցէ։ Ապա տեսէք, որ աշխարհիս վերայ պէսպէս փորձութիւնք կան. թէ հիւանդութիւն, թէ աղքատութիւն, և թէ այլ ինչ նեղութիւն, Աստուած զձեզ յամենայն փորձութենէ հեռի պահեսցէ։ Բայց Աստուծոյ հրամանն այս է, որ դուք երկոքեանդ մինչև ի մահ միմեանց օգնութիւն պարտիք առնել»։

Այս խօսքերից յետոյ հարցնում է ամուսնացուներին՝ թէ արդեօք այդ բոլորը հանգամանքների մէջ համաձայն են իրար հետ սիրով ապրելու. ըստ որում և համաձայնութիւն լսելով, շարունակում է.

«Այս բանիս վկայ Աստուած է՝ որ աներևութապէս ի վերայ ս. սեղանոյս բազմեալ է։ Այլ և մեր պահապան հրեշտակքն այս ս. եկեղեցիս, ս. խաչս և ս. Աւետարանս, դասք քահանայից և երամք ժողովրդոց. սոքա ամենեքեան վկայ լինի՞ն մի»։

Եւ երբ համաձայնում են, քահանան օրհնում է. «Աստուած ի մէջ սոցա, և սոքա մի՛ սասանեսցին. օգնեսցէ սոցա Աստուած . . . »։ Որով և սկսւում է աքանչելի օրհնութիւնը. պսակուողք պարտաւոր են ուշադրութեամբ վերլսանալ այդ դեղեցիկ օրհնութիւնների հետ դէպի Աստուած և հայցել՝ որ նա թագաւորէ իւրեանց մէջ։ Միայն այդպէս կարող են անվրդով լսել.

*) Նախընթաց համար։

«Որպես լեր բերկրեա՝ հարսնացեալ սուրբ եկեղեցի. պայծառացո՛ զմանկունս քո յօրհնաբանութիւն ծագողին ղշող լուսոյ ի քեզ, Սայր եկեղեցի»։

Եւ կամ մի՛ ասնել ս. Գրքի պատուիրանները, որոնցով պարտաւոր են առաջնորդուիլ, ըստ որում և կարգացումեն այն բոլոր կըտորները, որոնց համաձայն պէտք է լինի ճըշմարիտ Աստուածահաճոյ պսակը, միշտ՝ «զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ» աստուածային խօսքի կրկնութեամբ, կամ մաղթելով. որ լինին «ի մարդին, ինքնուրեալ հնազանդեալ հեղու-ընդունայն, սիրել զմիմեանս պարկեշտ վարուք, ամբիծ հոգւով, առանց ամօթոյ, առանց լըկտութեան պատրաստ լինել ի գործս բարիս» «սուրբ և անարատ միաշունչ և միախորհուրդ»։

Ահա թէ ինչ է բարեմաղթում Հայաստանեայց ս. եկեղեցին, ուստի և Անտանեայ Նարեկացին իրաւամբ ներբողում է եկեղեցին. «Դու ամուսնացելոցն յարգարիչ և պահպանակ պարկեշտութեան անբիծ և անխարդախ բարեկեցութեան և անարատ կենցաղավարութեան»[1]։

Հայոց ս. եկեղեցին կապում է այր և կնոջ մտքերը սիրոյ կապով, միացնում է, և դնում նորա վրայ ս. խաչի նշանը։

ԿԵԱՆՔԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՆՔ ԵՒ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՆՔ։

Եկեղեցին միշտ ձգտում է, իրականացնել իր սկզբունքները կեանքի մէջ, որ ժողովուրդը մօտենայ օրըստօրէ Աստուծոյ ալքայութեան աիպարին։ Եւ որովհետև կեանքն իր յատուկ զարգացումն՝ անշուշտ եկեղեցու դաղափարական սկզբունքների և վարդապետութեան փրկարար ներգործութեամբ, հասկանալի է որ կլինին իրականութեան մէջ պակասութիւններ, որոնք եկեղեցին ձգտում է հետըզհետէ վերացնել։ Այդ նպատակով ունի նա պսակի օրհնութեան անբաժան հիմունքը կազմող կրթող որոշ կանոններ, այդոնք Աւետարանի շաւղով արժանի են դարձնում ամուսնութիւնն աստուածային օրհնութեան։ Ըստ այնմ այդ օրհնութիւնը չեն կարող վայելել նոքա, որոնք զուրկ են Աւետարանից բղխած այդ հիմունքներից և հակառակ են ընթանում իւրեանց գործերով ս. եկեղեցու սրբարար վարդապետութեան, չարժանանալով այդ օրհնութեան և աստուածային բարձրագոյն հեղինակութեան։[1] Հայաստանեայց ս. եկեղեցին և չի կարող հակառակ գործել իւր դաւանանքին և վարդապետութեան և անարժաններին յարմարուել, ապա թէ ոչ՝ կկորցնի իւր կոչումն և իւր նշանակութիւնն և ինքն ըստ ինքեան կդատուի, իսկ ժողովուրդը կորըստեան կմատնուի՝ Աստուծոյ հակառակ ձայնապարհի վրայ։ Եկեղեցին փրկարան է, միայն եթէ նորա կարգ ու կանոնները անփոփոխ են և աստուածային, որպէս և են, ըստ որում և իրական կեանքը պէտք է հետզհետէ նորա ներգործութեան և ըստ Քրիստոսին բարեփոխուի, որ երջանիկ լինի։ Հետևեալ ուրեմն Հայոց եկեղեցու այդ կանոններին։

Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով ճնացած 30 կանոնների մէջ ասուած է. «Թէ ոք առևանգ արասցէ՝ պսակն անվաւեր լիցի, և պսակեալն ումմէ կամիցի լիցի»։ Այնպէս որ

1. Ճառաքաղ. 1859. էջ 405։

1. «Իսկ եթէ ոք . . . . գիտա ինչ մարմնաւոր և կամ հնաբոք մարդկային և կամ արուեստ երկրաւորեան զսահմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտ եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգև առաւել կենաց և ակնկալութիւն աստուածային և Հոգւոյն Սրբոյ յայտնեալ լուսաւորագ նախագրութիւն . . . . և միանգամայն ասել՝ գուռն երկնից և քաղաք Աստուծոյ կենդանւոյ և մայր կենդանեաց ազատ ի պարտեաց և ճշգրիտ տեսակ կերպի երևակիս բանականի, իմանալին՝ խորհուրդ Հոգւոյն, և շօշափելին՝ պատկեր մարմնոյս . . . . . զայնպիսի ոչ խոստովանողն մերժէ յերեսաց Իւրոց Հայրն Ամենակալ ի ձեռն Բանին իւրոյ էակից, բարձեալ ի նմանէ և զաւանգ շնորհն Հոգւոյն փառակից, փակեսցէ զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին»։ Ս. Գրիգոր Նարեկացի. Հե, 15։

բռնութեամբ դրուած պահն ապօրինի է և մերժուում է։ Իսկ յետոյ.

«Որ վանն պոռնկութեան արձակէ զկին իւր՝ արձակեալ լիցի, բայց մի առ սրբեսցի»։ [1]

Ուրեմն մի տարի սրբուելուց (ապաշխարելուց) յետոյ իրաւունք ունի այրն ամուսնանալ։ Այդ լրացնում է և միւս կանոնը, «եթէ ոք Թողու զերկրորդն և յառաջինն դարձցի ի Թողեալն, 7 ամ ընդ յանցանացն ապաշխարեսցէ, և երկու ընդ օրինօք»։ Վերջապէս. «Այր որ զկին իւր Թողու ի պատճառս աստուածպաշտութեան, նզովեալ եղիցի ի կեանս և ի մահ»։

Փոքր ինչ յառաջ դնալով, տեսնում ենք որ Ղ. դարի երկրորդ կիսում Հայոց եկեղեցին աշխատում էր մաքառել կնաթող լինելու դէմ։ Փաւստոս Բիւզանդն ասում է. «Եւ յաւուրսն Ներսիսի Հայրապետին ոչ ոք իշխէր ի նմանէ հանել կամ Թողուլ իւր զամուսին յամենայն երկիրն Հայոց, զոր միանգամ քօղով կամ պսակաւ հարսանեացն օրհնութեամբ առեալ էր, և ոչ այլ առնել միսանգամ իշխէր ոք համարձակել»։ [2]

Ըրշակաւան աւազականոցի մասին էլ պատմելով ասում է. «Բազում վնասս առնէին և անդ անկանէին. բազում կանայք զարս Թողուին և անդր անկանէին. բազում արք զիւրեանց կանայս Թողուին, և այլոց կանայս առեալ՝ անդր անկանէին . . . . . »։ [3]

Ուրեմն ամուսնալծողները ուղղակի չարագործների թիւումն էին և վախչում էին դողերի ապաստանարանը։ Նոյնը կրկնում է և Ստեփանոսը. «աւանդառուք և պարտականք և ծառայք և վնասակարք և գողք և սպանողք և կնահանք, և այլք այսպիսիք փախուցեալք անդր անկանէին, և ոչ կայր նոցա այց և խնդիր»։ [4]

Ուրեմն արդէն Դ. դարում, երբ հեթանոսական սովորութեանց յիշողութեան տակ էր ժողովուրդը, չարագործութիւնն և անելելի ոճիր էր համարւում ամուսնին Թողնելն։

Յանելով ե. դարը, տեսնում ենք որ ս. Սահակ հրամայում է քահանաներին. «Ուսուցէք և զժողովրդականս յամենայն անառակութենէ ի փախչել . . . . տեսցեն զչնացողս, զգողս զպոռնիկս, զաւազակս. ամենեքին մի հաղորդեսցին և մի ասպնջական լինիցին այնպիսեացն, զի մի եղիցին և ինքեանք ընդ նոսին որդիք կորստեան»։

Ուրեմն պոռնիկներն ու շնացողները որոշում էին եկեղեցուց։

Փոքր ինչ յետոյ Շահապիվանի սուրբ ժողովն ողրում է ժամանակի խառնաշփոթ վիճակն՝ ասելով. «Ի ցամաքել սիրոյն բազմանայր անօրէնութիւն . . . . և լինէր յաճախումն մծդնէից և այլոց չարեաց, կնահանէից, պոռնկաց, գողաց, անձնակամաց ամենայն խոտորնակ չարագործաց՝ յաշխարհիս Հայոց ի մէջ տանս Թորգոմայ»։

Ըստ որում և ժողովն ամեն միջոցների է դիմում վերացնելու համար այդ չար սովորութիւնը։ Նա կարդազուրկ է անում այն հոգևորականին, որ խառնւում էր պոռնկական ախտի մէջ, «և վկայութեամբ իրքն ի յայտ եկեսցեն . . . . »։ մինչև որ ապաշխարութեամբ քաւէր։ Իսկ «եթէ կնաւոր երէց գտցի ի պղծութեան և ի պոռնկութեան և յայլ գործս չարեաց, և ստուգեալ վկայիւք, քահանայութիւնն լուծցի, և յեկեղեցւոյ բաժնէ հեռացեալ լիցի. Ց. դրամ տուգանս տացէ և ի կարօտեալս բաշխեսցեն»։

«Ապա եթէ կին երիցուն կամ սարկաւագին ի շնութեան գտցին՝ ընտրոց տէր նոքա լիցին. կամ զեկեղեցին և զքահանայութիւնն ընտրեսցեն, կամ զկինն. եթէ զքահանայութիւնն առցէ, զկինն ի տանէն ի բաց հանցեն, և ապաշխարութիւն խիոտ ի վերայ դիցեն»։

Ուրեմն քահանան կարող է իւր պոռնիկ կնոջ պահել միայն թէ, այն ժամանակ պարտաւոր է Թողնել քահանայութիւնն և հարկի տակ մնալ։ Իսկ ժողովրդականաց համար կանոնադրում է. (Գ. կանոն)

«Եթէ ոք կին ունիցի, և պոռնկեսցի, և զկարգ ամուսնութեան սրբութեամբ ոչ պահեսցէ, և զպըսակն զոր առ ի ձեռն քահանային ի ս. եկեղեցւոջն ի գլուխ իւր ընկալաւ . . . . . և ապա առ ոտն ևհար, և զօրհնութեամբ ամուսնութիւն զոր Աստուած ետ նոցա՝ պղծութեան կոխան արար, ի շնութիւն անկաւ, և ի պոռնկութիւն, և ի հանգանակս արբե-

1. Այս կանոնի սկզբունքի նմանութիւնն արտայայտուած է և Նիոյ—Կեսարիոյ (314-ին) ԺԱ. կանոնի մէջ. . . . «բայց Ա. ամ ապաշխարեսցէ, ի ձեռն ողորմութեան սրբեսցի և հաղորդեսցի օրինացն, եթէ կամեսցի կին արասցէ, և կինն այլում առն չիշխէ լինել մինչ կենդանի է այր նորա»։

2. Տպ. Վենետիկ. էջ 229։

3. Անդ. էջ. 607։

4. Պատմութիւն. III, ԻԷ։

ցութեան, զայնպիսին կշտամբեսցեն զքաւորքն գանիւք և բանիւք օգտակարօք և յեկեղեցւոյ ի բաց մերժեսցեն. և տուգան կալցին յեկեղեցի, և ընդ կարօտեալս բաշխեսցեն, փոխանակ զի անարգեաց զեկեղեցին, և զպակն օրհնութեան պղծեաց. Թէ ազատ է և կան չէ մարթ հարկանել՝ ի տուգանն և յապաշխարութիւնն յաւելցին, ԼՐ. դրամ կարօտելոց, Բ տարիս յապաշխարութեան. զպղծութիւնն այլ մի ևս գործեսցէ. ապա մտցէ յեկեղեցի և ընդ ընկերս խառնեսցի»։

Դարձեալ. (Գ. կանոն) «Եթէ ոք զկին Թողցէ զորդւոց մայր առանց բանի պոռնկութեան, և կամ Թէ արատ ինչ չար ի մարմնի չիցէ, այլ որ եթէ այրն շնաբարոյ իցէ, և այլում ակն եդեալ ի ցէ, դատաստանս այս լիցի. զորդիս և զտուն և զկեանսն և զՀողն և զջուրն և զամենայն ինչ բաժանեսցին հասարակաց, զկէսն կնոջն տացեն, և կնոջն եթէ կամք են այր ի տուն ածել՝ ինքն համարձակ անցէ, զբաժինն կալցին և զարքունի հարկն ողջ արասցեն, և այրն որ եթող՝ Ի. ամ ապաշխարեսցէ, և յեկեղեցի տուգան տացէ, Թէ ազատ է Յ. դրամ, Թէ չինական՝ դանալի լիցի, և Ճ. դրամ յեկեղեցի տուգանեսցի, փոխանակ օրհնութեամբ զամուսնութիւնն խոտելոյ. Ապա եթէ մինչդեռ ի պայքարին և ի տուգանի իցեն, և կին ոք յանդգնեալ կնաթողին կին լինի, և ամ մի չիցէ անցեալ, յայտ եղիցէ Թէ զառաջին կինն նա ետ Թողուլ կալցին զկինն և յուրկանոց տացեն, տարի մի ապասցէ գոտեացն, եթէ ազատ է յուրկանոց էրիմայ, Ճ. դրամ տացէ ի գոտիան»։ *

Յոյնանման սոսկալի պատիժներով է ենթարկում և ամուլ կին արձակողին։ Ընդ սմին նախընթաց կանոնին պէտք է աւելացնենք և մի ուրիշն, որ է այս. (Զ. կանոն).

«Եթէ կին ոք յառնէ ելանիցէ՝ կալցին և անդրէն յայր իւր տացեն, մանաւանդ զոր վարձանօք իցէ վարձեալ, և ոչ բողարար, Թէպէտ և վաճառեսցէ, Թէպէտ ի յաղախնութիւն կալցի, եթէ կամք իցեն հոգևոր և բարի խրատու և սիրով կալցեն. Ապա եթէ այրն չարաբարոյ իցէ, կամ պոռնիկ, կամ հանգանակող և արբեցող, կամ այլ ինչ խեղկան, գանիւ և խրատու կշտամբեսցեն զայրն, և հնազան. դեցուսցեն զերկոսին, եթէ ազատ է՝ տուգանօք և խրատու զայրն ի կարգ ածցեն, ապա Թէ գիւրափոխեսցի այրն, կինն պաշտեսցէ զնա»։

Այս կանոններըս, մանաւանդ Գ. և Զ. որոնք հրամայում են ամեն միջոցներով ուղղել ամուսինները, պարզապէս ցոյց են տալիս, որ Հայոց Եկեղեցու ս. Հայրերը մերժում են պսակը լուծման կարելիութիւնը։ Վերևի երկու կանոնների վերջում ևս ասուած է. «Որ զորդւոյ մայր Թողցէ, կամ զամուլ առանց բանի պոռնկութեան կամ այլ արատոյ, առն և կնոջ պատուհասատուգան և ապաշխարութիւն, կանոն և ծահման այդ կացցէ»։ Ըստ որում ուղղել և միայն ուղղելն է ս. ժողովի սկզբունքը. դորա համար են դրուած բոլոր խստութիւնները և յարուցած դժուարութիւնները։

Բայց կայ պսակ, որ անվաւեր է համարւում։ Ի. կանոնը խօսելով առևանգման վրայ, աւելացնում է. «Ապա եթէ երիցու ուրուք գաղտ պսակ եդեալ իցէ առանց հօր և մօր աղջկան, երէցն զքահանայութիւնն չիշխէ պաշտել . . . . և պսակն զոր ետ՝ անվաւեր լիցի»։

ԺԲ. և ԺԳ. կանոնները անվաւեր են համարում և այն ամուսնութիւնն, որ հակառակ է Հաւատոյ կանոնին, որի մասին յիշոց պէտք է խօսենք։ Սոյն կանոնը, ըստ էի բոլոր կանոնագրութեանց մէջ կրկնւում է, այնպէս որ դրուած արգելքների դէմ պսակադրութիւնը չի կարող ինքն ըստ ինքեան վաւերական համարուիլ։

Ներսէս Բ ի (546?—556) անունով ևս կան 43 հատ պատժական կանոններ, որոնց մէջ գտնում ենք Թէ անվաւեր պսակների յիշատակութիւն և Թէ հետևեալ մի կանոնը.

«Վասն այնոցիկ, որք զպոռնիկ կանայս Թողուն, և. ամ ապաշխարեսցին և կին արասցեն, և կինն առն չիշխէ լինել»։ Իսկ յետոյ «Վասն որ զիւր կին Թողու և այլ առնէ, և ապա դառնայ յառաջինն, և. ամ ապաշխարեսցէ»։

Այլ և. «Վասն կնոջ որ ընդ արամբ է և շնայ, Թէ Թողցէ զպղծութիւն իւր, Ե. ամ առ դրանն Գ. ընդ օրինօք ապաշխարեսցէ»։

Այստեղից արդէն տեսնում ենք, որ պոռնիկ կնոջ Թողնողը պէտք է նախ ապաշխարի և ապա ամուսնանայ. իսկ եթէ չնացողն ուղղուի, դարձեալ պէտք ապաշխարութեամբ արթի իւր պղծութիւնը։ Առաջին կէտը տեսանք և վերև։

Ապաշխարանքի վրայ խօսելով, յիշենք մի

*. Տես. և Նիւոկեսարոյ ԺԲ. կանոնը։

քանի ուրիշ կանոններ ևս։ Ս. Գ. Լուսաւորչի վերոյիշեալ կանոնների մէջ կարդում ենք.

«Որ մին կուսան իցէ և մին երկեակ, Բ. ամ արտաքոյ և մի ընդ օրինօք»։

Իսկ Ներսէս Բ-ի կանոնի մէջ. «Վասն որ մին կուսան է, և մին երկեակ և զուգին. Գ. ամ ապաշխարեսցեն»։

«Վասն որ ընդ երկու քեռց պոռնկի, և ապա ղմին կին առնէ, Ժ. ամ ապաշխարեսցէ»։

«Վասն որ յառաջ քան զՀարսանիսն չնան և կին առնէ, Գ. ամ արտաքոյ, և Ե. ընդ օրինօք ապաշխարեսցէ»։

«Վասն որ շնայ և զնոյն կին առնէ, Գ. ամ ապաշխարեսցէ»։

«Չէ պարտ զկուսանս այրեաց ամուսնացուցանել և ոչ զայրիս կուսանաց, զի աննման է»։

Յովհան Իմաստասէրը կանոնագրում է.

«Իսկ զերկեական նոյնպէս պարտ է ըստ առաջին կարգին՝ միջնորդօք և խօսնականօք հաւանեցուցանել յիրերաց յօժարութեամբ, և յԱկեղեցւոյն և ի քահանայիցն օրհնութենէն ընդունել զնշան վսեմագործութեան իւրեանց. իսկ եթէ ոք ոչ այսպէս, այլ յառաջ խանձեսցին և պղծեսցին առ իրեարս, զայնպիսին ի բաց մեկնեսցեն ի միմեանց, և զընացեալ զկանոն և զսահման ի վերայ դիցեն։ Իսկ եթէ ոչ առնուցուն յանձն մեկնիլ ի միմեանց, յետ Ժ. ամի ապաշխարութեան ողորմութեամբ և արտասուօք արժանաւորեսցին խառնիլ յԱկեղեցի Աստուծոյ»։

Չապա և երրորդ անգամ ամուսնացողների համար, որ անբարեպաշտութիւն է համարում, կանոնուած է.

Ներսէս Բ-ից. «Վասն երրորդաց որք զուգին, եթէ թողցեն, Ծն. ամ արտաքոյ և Ե. ընդ օրինօք Եկեղեցւոյ»։ *

Սիոն կաթուղիկոսից. «Երրորդացն զուգութիւն խառնակութիւն է, պղծագործ շնութիւն, անքաւելի յանցանք. եթէ ապաշխարութեամբ կամին ջնջել զմեղս, նախ որոշեսցին ի միմեանց խստաւ. ապա եղիցին արժանի ապաշխարութեան. և քահանայ որ զուգութեան նոցա պատճառ լիցի՝ լուծցի և նզովեսցի»։ *

Բացի վերոյիշեալ ապաշխարական դէպքերից, որոնցից հետևում է, որ երրորդ ամուսնութիւնը կամաւորապէս արգելուած է, կայ և մի ուրիշ կանոն, որ ամուսնութիւնը թոյլ է տալիս միայն կարող է իրապէս վայելել պսակի օրհնութիւնը, տեսնում ենք՝ որ պսակն արգելուած է նաև կոյսի և այրու և երրորդ անգամ այրիացածների համար։ [1] Ամենապէս արգելումէ անչափահասների ամուսնութիւնն, որպէս յիշում են թէ ս. Սահակի, թէ Ներսէս Բ-ի իր (Դւնայ ս. Ժողովի) և Շնորհալու կանոններն, ըստ որում և իւրաքանչիւր պսակ պէտք է անպատճառ ամուսինների փոխադարձ համաձայնութեամբ կայանայ։

Լուծման վերաբերմամբ մի կանոն ևս կայ ամուսնի դերութեան (կամ աքսորանքի) պատճառով. այդ Ներսէս Գ. Շիրողի Լ. կանոնն է.

«Ա՛յլ վասն մերոց մեզաց՝ յորժամ աշխարհս գերեցաւ ի թշնամեաց՝ բաղում արք և կանայք ի գերութեան էին. նոցա ամուսինքն առանց վարդապետի հրամանի, կանայս առին, և արանց եղեն։ Վասն այսպիսեացն սահմանեցաք այսպէս, թէ յառաջ քան զԸ. ամն՝ մինչ զուգակիցն ի գերութեան էր, և նոքա յանդգնութեամբ այլ ամուսին՝ առին այնպիսեացն ամուսնութիւն ի պոռնկութիւն է, և գան և պատուհաս կրեսցեն. յընչից և ստացուածոց նոցա հրամայեցաք առնուլ վարդապետաց, և յաղքատս բաշխել, և զնոսա զատուցանել ի միմեանց և ապաշխարել Ե. ամ։ Իսկ Ը ամին եթէ ամուսինքն դարձեալ լինին ի գերութենէն, անդրէն հրամայեցաք գառնալ յիւրաքանչիւր ամուսին. ապա եթէ ոչ՝ կալցին զոր առին, և նոքա որ գարձանն օրհնութեամբ այլ կանայս առնեն, և այլ արանց լինին, և կրկին ապաշխարութիւն ի վերայ դիցեն։ Իսկ որ համբերեացն ջԸ. ամն առցէ օրհնութեամբ առանց տուգանաց և պատուհասի, և կրկին ապաշխարութիւն ի վերայ դիցեն»։

Ուրեմն լուծւում է, և այն ամուսնութիւնն, որ պսակադրուել է, գերուած ամուսնուց յետոյ եօթը տարուանից առաջ։ Իսկ եթէ ժամանակը լրանալուց զկնի պսակուամեն, պէտք է ապաշխարեն, որովհետև գործը գարձեալ ծանր է անսիրութեան ապացոյց՝ քանի որ տասպրուած ամուսինը կենդանի է։

Ապօրինի պսակադրութեան անվաւերակատարութիւնն և արձակման վերաբերմամբ խիստ կանոնագրութիւնը ճանաչում է, և ս. Ներսէս Շնորհալին, որ գրում է առ քահանայս Թլղաթի մէջ. «Մի և կնաթող ց արանց, կամ այրեաց

*. Ժմմտ. և Ներսէսեարիոյ Թ. Ժ. Բարոյի Գ. կանոնները։

1. Երրորդ պսակի արարողութիւն ևս չունի Հայոց Եկեղեցին։

զաց կանանց՝ առանց կանոնական հրամանին՝ դիցէ ոք պսակ՝ զի մի լուծչիք դուք ի քահանայական կարգէ՝ ըստ կանոնաց՝ և եգեալ պսակն քակտեսցի՝ և եթէ բռնանան՝ և ոչ բաժանին՝ ընդ պոռնիկս համարեալ լիցին»· որոնք Եկեղեցւոյ մերժուսմունս։

Այլ և «Պահեսցէն և զհրամայեալ օրէնսն ի Տեառնէ՝ որ յադագս առն և կնոջ անբաժանելի զուգաւորութեան. զի բաց ի բանէ պոռնկութեան և որ այլ ևս են ի կանոնս ս. Հարցն գրեալ պատճառք՝ այլովք իւիք մի արասցէ բաժինս . . . . զի թէ որ արձակէ զկին իւր և արասցէ այլ՝ չնայ· ըստ բանին Քրիստոսի՝ ապա և արձակեալն ընդ նմին զոր արձակեաց՝ չնութեան մեղսքն պատժիցի ։ *

Դարձեալ· «Մի ոք ի քահանայից ի բռնութենէ բռնաւորաց առանց կամաց առնն և կնոջն պսակ գիցէ . . . Զի պսակն այն անհաստատ է և լուծանելի, և պսակագիրքն ոչ առանց պատժոց»։

Վերջապես յիշուսմունք մի հանդամանք ևս, այն է՝ երբ մի ամուսինը հերձանոս է։ Այս մասին Պօղոս առաքեալն ասուսմունք. «Եթէ ոք եղբայր կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա՝ մի թողցէ զնա։ Եւ կին որ ունիցի զայր անհաւատ, և նմա կամ իցէ բնակել ընդ նմա՝ մի թողցէ զայրն. Զի սուրբ է այրն անհաւատ կնոջն . . . . Ապա եթէ անհաւատն մեկնեսցի՝ մեկնեսցի՝ զի ոչինչ հարկ ի վերայ կայ եղբօրն կամ քեռն յայնպիսի իրս՝ քանզի ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած»։ 1

Այս այն դէպքի մասին է, որուսմ անհաւատ ամուսիններէից մեկը քրիստոնեայ է դառնուսմ։ քրիստոնեան պարտաւոր է պահել քրիստոնէական հրամանը, մինչդեռ հերձանոսը պարտաւոր չէ և եթէ թողնէ ամուսնուն, քրիստոնեայ կողմն ազատ է վերստին պսակուելու։ Այդ կարգի բացատրութիւնը տալիս է Սարգիս Շնորհալին, 2 ասելով որ պատուիրուած է, կանանց հնազանդ լինել «այլ և անհաւատից (արանց) և պագշտեցողն և ապստամբից ի բանէն ճշմարտութեան։ Եւ նմա կամ իցէ բնակել ընդ կնոջն քրիստոնէի, մի թողցէ զնա՝ ըստ առաքելական խրատուն . . . . » . . «այլ՝ բարեկարգութեամբ ընդ նմա կալով՝ համեստ գնացիք շահել զնորա փրկութիւնն»։

Իսկ հերձանոսի հետ պսակուել արգիլուած է Հայաստանեայց Եկեղեցու կանոնապրութեամբ։ Այդպես Ներսէս Բ-ի ԺԴ· կանոնն ասուսմէ. «Վասն որ զհերձանոս կին առնէ, կամ լինի առն՝ շար է. մանաւանդ եթէ յանհաւատութեան կան մնան. եթէ թողցէ կամ մեռցի անհաւատն, ԺԵ· ամ ապաշխարեսցէ, և զնունդն ածիցէ ի հաւատս։

Մանաւանդ Սիւնի ԺԱ· կանոնը. «Քահանայք պատուէր արասցեն՝ արանց և կանանց և դստերաց նոցա՝ զի ոչ արասցեն ընդ հերձանոսի զուգութիւն՝ զի չէ ամուսնութիւն, այլ անօրէն և պիղծ խառնակութիւն. զի զի՞նչ բաժին կայ հաւատացելոցն ընդ անհաւատին՝ զի շար է քան զչնութիւն և որ կարշագոյնն է քան զչնութիւն անբանական յանցանք ։

Ուրեմն հերձանոսի նաև այլազգանալ * հետ Հայի ամուսնութիւնն արգելուած է բացի ի բաց, քանի որ սերոյ և զգացմանց միութիւն չեն կարող ունենալ ։ և հաւատացող չլինելով՝ չեն վայելիլ Հայոց եկեղեցու օրհնութիւնը։ Առանց հաւատքի՝ օրհնութիւնն ոչինչ է, և սրբապղծութիւն է անհաւատի վրայ խորհուրդ կատարելը։ 2

---

*. Ընդհ. էջ 304։

1 Ա. Կորնթ. Է, 12։

2. Մեկնութիւն Կաթուղիկեայց. Կ. Պոլիս. 1826 էջ. 291. 292։ Հայսմէական եկեղեցին բացէ ի բաց մերժումէ լուծելու հնարաւորութիւնն, այլ ճանաչումէ միմիայն ժամանակաւոր բաժանումն։ Մինչև անգամ եթէ մի ամուսինն այլազգանայ է և թողնուսմէ հեռանում իւր կողակցից, վերջինիս իրաւունք չէ տալիս ամուսնանալու, քանի որ թողողը դեռ կենդանի է։

*. Այլազգանալի հետ պսակուելն արգելուած է 491 թուի Վաղարշապատի ու Դունայ ս. ժողովների նզովքներով. Ուխտանէս. II, էջ 80, 86, 136. Մովս. Կաղանկատուացի II, ԽԲ։ Տես. և Յովհան Իմաստասէրի ԻԹ և Լ. կանոնք։

1 1823 թուին Վայմարի դուքսն իրաւունք տուաւ քրիստոնեաներին և Հրէից՝ իրար աղջիկ տալու։ Գեօթէն լսելով սարսափել է և ասել, որ եթէ իւրեանց հոգևոր տեսչապետը բնաւորութիւն ունեցող մարդ լինէր, պէտք է այն րոպէին հրաժարուեր և չընդունէր այդ օրհնքը. զի եթէ անհաւատը մեռնէ և հաւատացողի հետ չնորհ վայելէ, այլ ևս ղգացմունք և բարոյականութիւն կմնայ ամենալաւ քրիստոնեայի մէջ անգամ։

2. Տես. Մատթ. Ե, 6։ Ընդհանր. էջ. 81—82։

Վերոյիշեալ բոլոր կանոնների սկզբունքները գեղեցկապես ամփոփուած են Կոստանդին Ա-ի ԺԵ· կանոնում՝ որ է այս·

«Առաւել քան տարցին եպիսկոպոսք և քորեպիսկոպոսք՝ զպոռնիկս՝ զչնացողս և զկմայս՝ և զամենայն յանցս սուրբն՝ երկիւղիւ գերհնին ի գարձ առնել· իսկ զանդարձն՝ մարմնաւոր պատուհասիւ և հոգևորաւ խրատել և տուգանել՝ մանաւանդ զայնպիսին որ այր և կնոջ մէջ մտցեն՝ կամ բոզ ունիցին կին՝ կամ՝ առելութեան պատճառաւ թողուն զկանայս առանց բանի պոռնկութեան· զայնպիսիս առանց խղճի անդորմ խրատեսցեն տուգանք·· »։[1]

Բոլոր ասածներից շատ պարզ երևում է, որ Հայաստանեայց ս· Եկեղեցու սկզբունքն է՝ ամեն միջոցներ գործ դնել և ուղղել մեղաւոր կողակցին· ոչ մի պատճառ չի կարող քակտել օրինաւոր ամուսնութիւնը, բացի մահից· Միայն թէ պսակն անվաւեր է, երբ ապօրինի է, երբ դրուած կանոններին հակառակ է։

Սակայն վերև տեսանք, որ կան ապաշխարանքով բաժանումներ· ուրեմն ո՞րն է ճշմարիտ եղրակացութիւնը։

Ա· ՏԵՐ ՄԻՔԵԼԵԱՆ։

(Կը շարունակուի)

Ի՛ՆՉ ՊԷՏՔ Է ԿԱՐԴԱԼ ԵՒ ՊԱՏՄԵԼ

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ·

Մինայն հաւանականութեամբ էնդեմական վէպը*, ոչ միայն առաձին անհատներին, այլև ողջ քաղաքակրթուած իրրեւ մէջ մեծ և ինքնուրոյն դեր է խաղացել։ Եւ արդարև գրականութեան այդ ճիւղի մեծ և կրթական նշանակութիւնը անկարելի է ուրանալ, եթէ մինչև անգամ խնդրին

1· Կիրակոս ԻԱ·

* Այնպիսի վէպ, որի մէջ գեր են կատարում գլխաւորապէս կենդանիները։

միակողմանի տեսակէտից նայելու լինինք, որ նա մարդու և այլ էակների մէջ մի առընչական յարաբերութիւն է կատում· շարժուձեւ արթնացնում է մարդու միտքն ու զգայմունքները· նկարագրում է նոցա փոխադարձ յարաբերութիւնները որով և մարդը մանկութիւնից գիտակցում և զգում է, որ նախախնամութեան անսահման օրէնսութեամբ իր և ամբողջ արարածական բնութեան մէջ մի ազգակցական կապակցութիւն է հաստատուած։ Իսկ դէռ ևս մանկութեան օրօրոցից զգալ և գիտակցել որ մարդը միայնակ չէ աշխարհում որ նա մի ընդհանրական էակ է ընդարձակ հասկացողութեամբ, ոչ այլ ինչ է այս, եթէ ոչ մի անգնահատելի երախտիք, մի երկնային պարգև, որ նոյն իսկ մարդու մէջ մարդու երջանկութեան համար բարերար և արգասաւոր հող է պատրաստում։ Կենդանական վէպի չափ դժուար անդրաժեշտ է և կենդանի խօսք։ Բայց այս մանուկը հետզհետէ աճում, զարգանում, հասունանում է։ Հերեաթների մէջ մանկական միտքը հրապուրող և յափշտակող կենդանիները՝ խորամանկ աղուէսն ու երկչոտ նապաստակը, ոսկեվիսուռ թռչուններն ու սիրուն այծեամները, անասուն գայլերն ու արիւնաւշտ ցին այլ ևս դադարում են զբաղեցնել հասունացած երեխայի միտքը առաջուայ նման։ Նա սկսում է աւելի ու աւելի հետաքրքրուել նոյն իսկ մարդկանց առօրեայ կեանքով և անցեալով, նոցա փոխադարձ յարաբերութեամբ, կենցաղավարութեամբ և գործերով։ Սովորաբար այդ ժամանակ երեխայի համար չանդէս է գալիս մանկական պրիցաղնական վիպասանութիւնը հնդկական, յունական և այլ ազգերի հերոսական վէպերի նմանութեամբ։ Անտեղ կըլինէր ասել որ դեր են խաղում այնպիսի մարդիկ և այնպիսի գործեր, բնութեան այնպիսի տեսարաններ և երևոյթներ, որոնք կամ գէթ որոնց մանրամասնութիւնները գոյութիւն չեն ունեցել երբէք և կամ միանգամայն հեռու են իրականութիւնից։ Այս շրջանում հետաքրքիր ըլլայ տակաւին մանկական

թոյլ միաքը ենթ—կայ է մեծ վարձութեան։ Նա, անկասկած, հետաքրքրում և հրապուրում է և առօրեայ առարկաներով և երևոյթներով, թէև սոքա երկար ժամանակ չեն գրաւում նորա ուշադրութիւնը դէպի իրենց։ Պատճառն է, որ երեխաները իւրեանց հետաքրքրութեան բաւականութիւն տալու համար ընդ միշտ ստանում են նոր և նոր տպաւորութիւններ։ Յաճախ մարդ է գալիս, մանուկը խորհրդաւոր ուշադրութեամբ իւր աչքերը նորա վրայ է սևեռում, բերանաբաց լսում է նորա խօսակցութիւնը. բայց այս դմբլումը շատ կարճ է տևում։ Կէս ժամուայ ընթացքում մանուկը արդէն յագուրդ է տուել իւր հետաքրքրութեան. հանգչում մտում է նորա մանրազնին դիտելու եռանդը և ապա մանուկը սկսում է մի շարք հարցերով ու թախանձանքներով ձանձրացնել ծնողներին և կամ նորից իւր խաղալիքներով է զբաղւում։ Անհատական նոր խաղալիք—, մանկան ցնծութիւններին վերջ չկայ, խնամքով հոգածութիւն, ուշի ուշով պահպանութիւն և ուրիշ ոչ մի բան չէ խնայում մանուկը խաղալիքների համար. սակայն այս ամէնը տևում է մինչև երեկոյ կամ հետևեալ օրը, շատ շատ միայն մի քանի օր, եթէ խաղալիքները աւելի զբաղեցուցիչ են։ Բայց պէտք է ասել, որ երեխաներին առաւել ձանձրացնում են առօրեայ կեանքից պատկերներ պարունակող գրքոյկները։ Եթէ նոքա քանի մի անգամ սիրով ձեռք են առնում այդպիսի գրքեր, այդ և ոչ, յաճախ մանկական սնապարծութեամբ, իւրեանց ընկերներին և բարեկամներին ցոյց տալու համար։

Եթէ երեխաները նոր տեղ են տեսնում գբօսավայր կամ դաշտ, պարտէզ կամ գեղեցիկ ծառաստան, ձորակ կամ ափբիւր. ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ բերկրալից բացագանչութիւններ. նոքա եռանդով թռչկոտում են դէս ու դէն. բակ, տուն, պարտէզ, ծաղիկ, ու սիզաւէտ մարգեր նոցա ոտքերի տակ են. սոյն ժամին նոքա այդ աղատ բնութեան ազատ տէրերն են։ «Չայրիկ, մայրիկ, իսկ այս ի՞նչ է. իսկ այս ո՞ւմն է. արդեօք կարող ե՞ս լողանալ։ Ո՞հ մայրիկ ջան, ի՞նչ սիրուն խոտ ձորներ. օ՜, օ՜, ի՞նչ բարձր, կանաչ խոտ ի՞նչ գոյնզգոյն ծաղիկներ։ Ո՞հ, մայրիկ, ես մի կոլ տեսայ. իսկ ես սիրուն գառներ տեսայ....»։ Անընդհատ հարցեր են առաջարկում ծնողներին։ Բայց այնուհետև մի օր երկու օր անցնելուց յետոյ նոր զբօսավայրը իւր նախկին հրապոյրներով հնանում է և երեխայի համար գրեթէ անհետաքրքրական է դառնում։

Բայց փորձեցէք մանկան հետաքրքրութիւնը օրևէ տարօրինակ բանով կամ հերիաթներով շարժել, այն ժամանակ դուք կր տեսնէք, թէ այդ հետաքրքրութիւնը որքան զօրաւորութեամբ է տառչում և օրպիսի ընդունակութեանց տէրիւր է դառնում։

Երեխաները շատ են սիրում երբ հերիաթը արագ առանց ձգձգելու են պատմում և խիստ տհաճում են, երբ հերիաթի մէջ հերոսական գործը ուշ է իրականանում։ Որքա մէջն է հետաքրքրութիւնը վառ պահելու գաղտնիքը։ Հերիաթների մէջ քաջազն հերոսների և սոցա կախարդիչ զէնքերի և գործիքների առասպելական պատմութիւնները այնչափ գրգռում և զարգացնում են մանուկների հետաքրքրութիւնը, որ նկատելի կերպով արտայայտում է նոցա ամբողջ կեանքի, նոցա ներքին արամադրութեան վրայ և սակաւ բացառութեամբ մեծ և բարերար ազդեցութիւն է անում երեխաների ամբողջ հոգեկան վիճակի կազմակերպութեան վրայ և նոցա մղում է դէպի բարին ու լաւը։

Ցանկալի է մնում նկատել, որ թէպէտ մանկան ուղերը ընդունում է զանազան տեսակ թանձրացեալ և վերացական պատկերներ կամ գաղափարներ և թէև շուտով բոլորովին չէ մոռանում դոցա, այնուամենայնիւ այդ տպաւորութիւնները մանկան մարքի մէջ իւրեանց նախկին ոյժը չեն պահպանում այլ յամենայն դէպս թուլանում են։ Ասած, երբ մանուկը շատ քիչ հետաքրքիր է դէպի իրականութիւնը, որոշ չափով անհրաժեշտ է, (նո-

րա մէջ հետաքրքրութիւն զարթեցնել դէպի երևակայական) (նոցա մտաւոր գործունէութեան զարգացումը դիւրացնելու համար), ամենևին չերկմտելով այս վերջին ընթացքի կամ միջոցի անյարմարութեան կամ կեղծութեան նկատմամբ։ Բայց ի հարկէ ամեն ինչ իւր տեղն ու ժամանակն ունի։

Դիւցազնական առասպելական վէպը չպէտք է մանկական տարիներից շատ ժամանակ վատնէ։ 4 – 5 տարեկանից ի վեր երեխաների համար նա այլ ևս կրթութեան և ուսման ծրագրի մէջ չպէտք է ներմուծուի։ Իսկ 7 տարեկանից սկսած նորան պէտք է փոխարինէ այն առասպելական վէպը, որ աւելի բարձր քաղաքակրթութեան արդիւնք է և որի մէջ այն ամենը ինչ որ երևակայական և մտացածին է տեղի է տալիս իրականութեան և մինչև իսկ իսպառ անհետանում է։ Այս շրջանին յատկապէս վերաբերւում են շարադրեալ զրոյցներ և մանկական պատմութիւններ։ Այս բոլորի, ուրիշ խօսքով, մանկական գրականութեան մէջ ամենակարևոր տեղ պէտք է բռնեն իրական անձերի և դիպուածների պատմութիւնները։

Իսկ իմ անձի նկատմամբ, համարձակ կարող եմ ասել, որ ուսումնարան մտնելուցս երկու տարի առաջ 7 9 տարեկան հասակում իմ ստացած բոլոր յիշողութիւնների մէջ առաջնագոյն տեղ են բռնում այն բոլոր տպաւորութիւնները, որ ներշնչել է ինձ «վարք սրբոց»ի ընդարձակ և յայնաճաւալ ընթերցանութիւնը։ Սրբոց կենսագրութեան ընթերցանութեամբ ես հոգեպէս մանկացում էի նոցա կեանքի բոլոր դիպուածներին։ Մի կողմից ի՞նչպիսի անյողդողդ հաւատք, անպարտելի դիմադրութիւն ամեն տեսակ բռնութեանց, գայթակղութեան և չարիքի դէմ։ ի՞նչպիսի անխորտակելի բարութիւն, անսահման սէր և ի՞նչպիսի հեզահամբոյր խոնարհութիւն։ Իսկ միւս կողմից որպիսի անտանելի խստութիւն, հալածանք, վայրագ չարութիւն, որպիսի մարդատեացութիւն որպիսի անարգանք և յուսահատութիւն։ Այս բոլորը ինձ հրճուանք և հոգեկան մխիթարութիւն էր պատճառում։ Այդ սրբազան հերոսների վիճակին հոգեպէս մասնակցելով, ոմանց հետ անապատում էի ապրում, այլոց հետ անմատչելի անտառային խոռոչներում, ժայռոտ քարանձաւներում։ երրորդի հետ խոնաւ բանտերում էի նստում, չորրորդի հետ տանջւում և գազանակուր էի լինում մի ուրիշի հետ տանիքների վրայ։ Աստուածային խօսքն էի քարոզում և հաւատքի ոյժով լեռներ շարժում. . . .։

Ես անկարող եմ որոշակի ասել, արդեօք ինչ եմ պարտական այս սուրբ մարդկանց, այս բարոյական հերոսների պատմութեան ընթերցանութեան, բայց թէ այդ ընթերցանութիւնը անօգուտ և անհետևանք չէ անցել ինձ համար, այդ մասին երբէք, երբէք չեմ կասկածել և այսօր ծերութեանս օրերում աւելի ևս քան երբէք հաւատացած եմ, որ սրբոց կենսագրութեան ընթերցանութիւնը իւր բարերար աղդեցութիւնը պիտի տարածէ իմ ամբողջ ապագայ կեանքի վերայ։ Եւ ես կարծում եմ, որ յատկապէս այդ տեսակ մարդկանց բարոյական հերոսութեանց պատմութիւններր, որոնք ամենևին չեն կապուած այլ և այլ կենսական շահերի և յարմարութիւնների հետ, մանկական գրականութեան մէջ առաջին տեղը պէտք է բռնեն 7 տարեկանից վեր մանուկների համար։ Ընդհակառակ ուշադրութեան պէտք է առնուին աշխատանքի, գիտութեան, արուեստի և պատմական նշանաւոր հերոսների պատմութիւնները, որպիսիք են Պլուտարքի, և Նեպոտի նմանութեամբ նկարագրած կենսագրութիւնները։

Չարկաւ իմ դատողութիւններին ոչ մի կրչիռ ունեցող տեսական նշանակութիւն չեմ վերագրում բայց շատ ցանկալի է, որ հոգեբանական և մանկավարժական հիմունքների համաձայն որոշուէր թէ ի՞նչպիսի պատմութիւններ և որպիսի գրականութիւն կարող է համապատասխանել մանկական այս կամ այն հասակին և յատկապէս լաւ բոլանդակութեան որպիսի յաջորդութեամբ պիտի

դասաւորուին և որոշուին մանկական հասակի և հասունութեան համեմատութեամբ։ Ներկայումս մեր մանկական գրականութեան մէջ, անկասկած, առաւել չափազանց վնասակար և անօգտակար հատուածներ կան քան իրեանց կոչման բաւականացուցիչ երկասիրութիւններ։ Ես կարծում եմ որ մանկական հրատարակութեանց ամեն տեսակ քննադատութիւնները պէտք է նշանաւոր տեղ ունենան մեր մանկավարժական պարբերական գրականութեան մէջ և երբեմն մանաւանդ մեծ արձակուրդներից առաջ, անհրաժեշտ է հրատարակել այդպիսի քննադատական յօդուածների ժողովածուներ, որոնք ծնողների և դաստիարակներին իրր ուղեցոյց և ձեռնարկ կըծառայեն։ Միայն այս ճանապարհով հնարաւոր է յաջողութեամբ կռիւ մղել ոչ միայն մայրենի, այլ և օտարազգի հեղհեղուկ ծաւալուող և միայն թերթեր սևացնող և վչացնող մանկական գրականութեան դէմ։

(Թարգմանութիւն)

Ղ. Ս. Գ.

ՈՒՍՈՒՑԻՉԸ

ԻՐՆԻՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴՈՐԾԻՔ։

Ուրաքանչիր ուսուցիչ պարտաւոր է երբեք չմոռանալ մեր (ծխական) դպրոցների իսկական նպատակը, այն է մատաղ սերնդին Հայոց Եկեղեցւ հաւատալիքն և գիտութիւնը ուսուցանել, ժողովրդի դիտակցութեան մէջ մտցնել կրօնական—բարոյական գաղափարներ և ի նպաստ դորան արծարծել օգտակար գիտելիքներ։ Նա որքան աւելի ձգտի դէպի իր գործունէութեան բուն նպատակը, նոյնքան էլ հասկանալի—սէր կտանայ ժողովրդի կողմից, նոյն չափով էլ կկարողանայ գրաւել իր սաներին . . . . Յայտնի է որ մեր ծխական դպրոցներում սովորում են գլխաւորապէս ժողովրդի ամենաչքաւոր դասակարգի, այսինքն արհեստաւորների, երկրագործների և մասամբ վաճառականների որդիները, որոնք դպրոց մանելիս դասագիտարակութեան ու կրթութեան հոսն անգամ առած չեն լինում և մինչև անգամ աւելի վատ՝ քան թէ լաւ գաղափարներ են ունենում և անսովոր են լինում թէ դպրոցական կարգն ու կանոնին և թէ կանոնաւոր աշխատութեան։ Սակայն ուսուցիչը պէտք է նպատակայարմար կերպով յարմարի այդ երեխաների մտաւոր զարգացման աստիճանին և բարոյական դրութեանը և պատրաստէ նրա մէջ ապագայ հոգեկ առած երկիւղած և բարեպաշտ մարդուն, որը իր սեփական արդար աշխատանքով վաստակել կարողանայ իր ապրուստը։ Նա պէտք է պատրաստէ հասարակութեան ապագայ օգտակար անդամը, տալով նրան այն գիտութիւնների սկզբունքը, որոնք հիմն պիտի կազմեն նրա մտաւոր-բարոյական զարգացման և պիտանի լինեն գործնական կեանքում։ Ի հարկէ ուսուցիչը պէտք է իր անպատրաստ սանների մէջ զարգացնէ և հաստատէ այն բոլոր յատկութիւնները, որոնք անհրաժեշտ են Հայոց Եկեղեցւ հաւատարիմ որդի, բարեխիղճ ու գործող մարդ, ընտանիքի արժանաւոր գլուխ և հասարակութեան օգտակար անդամ գտնելու համար։ Իսկապէս երեխաները առաջին տեղն են բռնում թէ իրանց ծնողների սրտում թէ ընտանիքի, թէ հասարակութեան և թէ ամբողջ մարդկութեան մէջ, որովհետև նրանց մէջ է ամփոփում ժողովրդի ամբողջ ապագան։ Այդ իրողութիւնը իրանց յիշողութեան մէջ թարմ պիտի պահեն յատկապէս ուսուցիչները. որովհետև երեխաներն են դրանց գործունէութեան կենարոնը, երեխաներն են մշակելու լայն նատուածք, բայց արգաւանդ դաշտը, որը կարօտ է արժանաւոր սերմերի. վերջապէս երեխաների բարձր արժանիքների մէջ է պարունակւում և ուսուցչական վեհ կոչման բարձր նշանակութիւնը։ Բայց դժբախտաբար կան ուսուցիչներ, որոնք առանց ըմբռնելու այդ անուրանալի ճշմարտութիւնը, շատ ան-

գամ ասում են, «Ը՜հ, երեխայ է, ոչինչ չի հասկանում....» և դեռատիթիթ աշակերտների ներկայութեամբ խօսում են անտեղի բաներ, վիճաբանում են, նրանց հասցէին յիշողներ-լուսանքներ են ուղղում, առանց մըտածելու թէ ամենը կապաւորուի երեխայի թարմ և անարատ ուղեղի մէջ և ապագայում կունենայ իւր վատ հետևանքները:

Երեխան մի անարուն էակ է, որ կարող է լինել ամեն ինչ և ոչինչ նա ունի զարգանալու ոյժ, բայց նա դեռ չի գործում ունի ընդունակութիւններ, բայց նոքա ծածկւած են, ունի անձնաւորութիւն, բայց նա դեռ ամբո չէ: Այդ բոլորը յանձնւում է ուսուցչին.... որքա՜ն մեծ հաւատարմութիւն... Այսքան անհոգութիւնը աւելի քան դատապարտելի է: Ուսուցիչը պարտաւոր է մանրակրկիտ կերպով ուսումնասիրել երեխային, առանց դրան նա իրաւունք չունի այդ սուրբ կոչմանը ծառայելու:—«Նախ պէտք է երեխայի հետ խօսել կարողանալ և ապա իրաւունք ստանալ նրա հետ խօսելու», ասում է Ա. կոմենսկին: Չարկաւոր է ճանաչել և սիրել երեխային, առանց դրան ամբողջ մանկավարժութիւնը ոչինչ է: Նրէ՛ք քիչ հեռու գնանք և քննենք Չարլզը քրիստոնէական տեսակէտից, այն ժամանակ երեխայի մեծ նշանակութիւնը, նրան ուսուցանելու, կրթելու պարտականութեան վեհութիւնը և որքութիւնը աւելի պարզ, աւելի ակներև կլինի: Յիսուսի օրհնութիւնը (երեխաներին ուղղած), նրա խրատները երեխաների մասին ցայց են տալիս մեր կրօնի Հիմնադրի հայեացքները երեխայի մասին: «Ձգնեցէք, որ Աստուածային պատկեր է երեխայի հոգին. երեխան կոկոնի մէջ ծածկւած մի ծաղիկ է, որ մի որոշ ժամանակի ընթացքում պէտք է բացւի և զարգանայ.... ուսուցիչը նրան զարգացնելու օժանդակիչ գործիքն է...» ասում է Հենրիխ Պեստալոցցին: Ուրիշ, մանկավարժներ երեխային մի փոքր աշխարհ են անուանում: Ուսուցչի պարտականութիւնն է բանալ այդ աշխարհը և ճանաչել նրա լաւ կողմերը: Մարդկային էութեան ամբողջ հարստութիւնը պարունակւում է երեխայի մէջ, ուսուցչի պարտականութիւնն է արթնացնել, ուղղութիւն տալ կեանքի այդ ոյժին: «Միայն կրթութիւնն է, որ մարդուն հսկական մարդ է դարձնում», ասում է Պեստալոցկին: Մարդկային ազատ-խելացի գործունէութեան սերմերը ընկած են լինում երեխայի բնաւորութեան մէջ. ուսուցչի պարտականութիւնն է ճանճնել և արմատացնել նրանց:

Ուսուցիչը նախ քան իսկական ուսուցում սկսելը պէտք է ուսումնասիրէ երեխայի բոլոր առանձնայատկութիւնները թէ մտաւոր և թէ հոգեկան, միևնոյն ժամանակ աչքի առաջ ունենալով և բնտանիքի, հասարակութեան, տեղական սովորութիւնների և շրջապատող այլ պայմանների ազդեցութիւնը: Այդ ազդեցութեան դրոշմը երեխաների վերայ չափազանց ուժեղ և անժխտելի է լինում: Թէև երբեմն միանգամից չի նկատւում հարկաւոր է միայն բարձրացնել այդ գաղտնիքը ծակող քողը և այն ժամանակ ամեն բան կպարզուի:

Ուսուցիչը երբէք չպէտք է խորշի աշխատութիւնից: Մանկավարժական աշխատանքը գրաւիչ և զբաղեցուցիչ է, բաւական է միայն մի անգամ ճաշակել այդ պաշտօնի ազնիւ հատարման հոգեկան ուրախութիւնը և գրանից յետոյ ամենածանր աշխատանքն էլ շատ թեթև կթուայ:

Սակայն չափազանց տխուր և ցաւալի երեւոյթ է, երբ ուսուցիչը գանգատ է ցոյց տալիս իւր պաշտօնից.—«Մարդ զզւում է միշտ միևնոյն բանը կրկնելով», ասում են երբեմն: Որպիսի ցաւալի հայեացք.... Ոյժով և կենսունակութեամբ լի մատաղ սերնդի կրթութիւնը ձանձրալի է՜... Մի՞թէ դա մի հասարակ արհեստ է, որ ձանձրացնէ մարդուս:

Շատ անգամ էլ ծխական դպրոցների ուսուցիչները գանգատւում են, թէ տարրական ուսուցումը բոլորովին գատարկ և ոչ մի նշանակութիւն չունեցող մի գործ է—«մարդ չի

կարողանում իւր գիտութիւնը գործադրել, մինչև անգամ մոռանում է, ինչ որ գիտէր», ասում են դրքա։ Այդ սեռակ տրտունջները ցոյց են տալիս միայն այն, որ կան մարդիկ, որոնք կատարեալ անհոգութեամբ և անխոհեմութեամբ են վերաբերւում դէպի ուսուցչութիւնը։ Եթէ ուսուցիչը դասագրքից հեռանում չգնայ, եթէ իւրաքանչիւր տարի կրկնէ միևնոյնը, ի՞նչ է ինքն էլ կբթանայ, իւր աշակերտներն էլ սիստեմատիքաբար կբթացնէ։ Բայց չէ՞ որ այդպէս վարւում են միայն Տեր Թոթիկի* նման խալխֆանէրը և ոչ թէ իսկական ուսուցիչները։

Իսկական ուսուցչութիւնը բաց է անում իւր պաշտօնակատարների առաջ մի բարդ, անսահման և բազմակողմանի առարկայ բեղմնաւոր գործունէութեան։ Նա բաց է անում ուսուցիչների առաջ երեխայական բնաւորութեան ամբողջ հարստութիւնը, որից օգտուելը ուսուցչից - իրանից է կախուած։ Ով որ կկարողանայ թափանցել նրա բոլոր խորշերը, ով որ կհասկանայ նրա պահանջները, կըմբռնէ այդ վեհ կոչման մեծ նշանակութիւնը, նա երբէք չի ձանձրանայ աշխատութեան կարծեցեալ միակերպութիւնից, չի ղղուի պաշտօնի հեշտութիւնից։

Վերջապէս ով որ հետամուտ կլինի մեթօդների, դպրոցական կարգապահութեան (дисциплина) փոփոխութեանը և կատարելագործութեանը, ով որ կջանայ զանազանաբեռակ առօրեայ մանկավարժական հարցերին լուծում տալ, ով որ կնկրտի իւր նկատած թերութիւնները ուղղել, նա երբէք չի բթանայ և չի հաւասարուի մեքենայական աշխատաւորի հետ։ Հաւատացած եմ, որ որքան բարձր լինի ուսուցչի զարգացումը, նրան նոյնքան դժուար և հետաքրքիր կերևի տարրական ուսուցումը։ Ամեն մի փորձուած մանկավարժ կխոստովանի, որ ամենահասարակ գիւղական ուսուցիչ - (չ հարկէ արժանաւոր) - լինելը ոչընչով հեշտ չէ միջնակարգ դպրոցների ուսուցչութիւնից։ Ահա վերոգրեալի մասին ինչ է ասում Կելներ. «ով որ երեխաների կրթութիւնը ձանձրալի և միակերպ է անուանում, ով որ անկարող է նուիրուել այդ գործին սիրով և ուրախութեամբ, նա ուսուցիչ չէ այդ բառի բուն նշանակութեամբ»։

Եւ իսկապէս եթէ ուսուցչութիւնը տաղտկալի է թւում, յանցաւորը ոչ թէ պաշտօնն է, այլ ինքը պաշտօնակատարը, որ չէ կարողացել ըմբռնել գործի էական գաղտնիքները։

Ուսուցիչը միշտ պէտք է աշխատի իւր գիտութեան պաշարը հարստացնել, անընդհատաբար սովորելով - (կեանքի դպրոցում)։ «Ուսուցիչը որքան էլ սովորի՝ աւելորդ չէ», ասում է Ուշինսկին։ Եւ իսկապէս եթէ ուսուցիչը հասկացել է ամենը, նա երբէք չի խոսի բթանալու կամ գիտեցածը մոռանալու մասին։

Ջանձրալի է երեխաների կրթութիւնը...։ Այդպիսի բողոքը պարզօրէն ցոյց է տալիս, որ ուսուցիչը երբէք չէ մտածել իւր պաշտօնի մասին, երբէք չէ խորհել այն միջոցների և պայմանների մասին, որոնցով կարելի է ձեռք բերել աշակերտների համակրութիւնը և սէրը, որոնք կարող են եռացնել նրա գործունէութիւնը և առանձին գրաւչութիւն տալ ուսուցչութեանը։ Աշակերտական կեանքն ունի իւր բազմազան ներքին և արտաքին երևոյթները, որոնց անուշադիր թողնելը մեծ անհոգութիւն է ուսուցչի կողմից. մանաւանդ որ այդ երևոյթները մեծ նշանակութիւն ունեն կրթական գործում։ Իբրև օրինակ աւելորդ չլինի յիշել աշակերտի գպրոց այցելելու հենց առաջին օրը։ Ուսուցիչներից շատ քչերն են հասկացած այդ օրուայ առաւելութիւնը և նրա աղդեցութիւնը աշակերտի վերայ։

Առաջին տպաւորութիւնները միշտ ուժեղ են լինում. ուրեմն ուսուցիչը թող լրջօրէն մտածէ այդ մասին և ջանայ առաջին օրը երեխայի համար գրաւիչ և ուրախալի դարձնել։ Եթէ աշակերտները հէնց առաջին անգամից լաւ տպաւորութիւն ստանան, այն ժամանակ սիրով կսպասեն դպրոց. եթէ հէնց

*. Բարֆֆի — «Կայծեր»։

առաջին անգամից սիրեն ուսուցչին, այն ժամանակ անկեղծօրէն բաց կանեն նրա առաջ իրանց սիրտը։ Իսկ եթէ ընդհակառակը ուսուցչի մէջ նկատեն սառնութիւն, խստութիւն, անարդարութիւն կամ կոպտութիւն, իսկոյն կխորշեն նրանից և հէնց այդ օրուանից նրանց և ուսուցչի մէջ մի պատնէշ կը գոյանայ, որը և միշտ հեռու կմղէ այդ անմեղ սրտերի սէրը դէպի ուսուցիչը։ Այդ դէպքում գպրոցը մատաղ սանների աչքում մի զզուելի տեղ կդառնայ և նոքա դժկամութեամբ գպրոց այցելելով, կաշխատեն միայն ժամանակ սպանել, չսիրած մշնջորդից շուտ հեռանալու համար։ Դրանից յետոյ արդէն հասկանալի է, թէ ինչու առաջին օրը կարծածից աւելի մեծ նշանակութիւն ունի...

«Թող ուրեմն - առում է Ա. Կոմենսկին - ուսուցիչը նմանուի լուսատու արեգակին, որը իր անսպառ տաքութեամբ կենդանութիւն է ներշնչում բոլոր արարածների մէջ և թող առաջին օրը դպրոցում լինի ուրախութեան և հրճուանքի օր աշակերտների համար»։ իսկ կեղները այդ մասին հետևեալ խօսքերն է ուղղում ուսուցչին։ - «Չագիր այդ օրը ամենալաւ շորերդ և ինչպէս մի բարի հայր ուրախ դէմքով ընդունիր երեխաներին.... Հաւատացած եղիր, որ այդ տպաւորութիւնը ընդմիշտ կմնայ երեխայի յիշողութեան մէջ։ Մի մոռանար, որ դու պարտական ես ոչ միայն սովորեցնել, այլ և կրթել։ Իսկ կրթութիւնը հնարաւոր է միայն սիրոյ միջոցաւ»։ Ահա թէ որքան մեծ նշանակութիւն ունի դպրոցական առաջին օրը թէ աշակերտների և թէ ուսուցչի համար։

Սակայն խոստովանելով առաջին օրուայ մեծ նշանակութիւնը և նրա առաւելութիւնները, պէտք է միևնոյն ժամանակ հասկացած լինել, որ նոյնքան մեծ նշանակութիւն ունի և ուսուցչի ամեն մի վարմունքը։ Նրա ամեն մի քայլափոխը պէտք է նախապէս կշռած լինի։ Նրա ամեն մի խօսքը պէտք է նախամտածած լինի և ամեն մի դէպքում նրա նշանաբանը պիտի լինի ազնուութիւն, արդարամտութիւն, խոհեմութիւն և հեռատեսութիւն։ Այդպիսի ուսուցիչը երբէք չի ձանձրանայ, չի գանգատի իւր պաշտօնից, այլ ընդհակառակը հետզհետէ խորասուզուելով նրա գրաւչութեան մէջ, աւելի արդիւնաւէտ, աւելի օգտակար կդարձնէ իւր պաշտօնավարութիւնը։ Իսկ եթէ ուսուցիչը զուրկ է յիշեալ յատկանիշներից, չէ ըմբռնել իւր կոչման վեհութիւնը և ուսուցչութեան վերայ նայում է իբրև մի արհեստի, նա բնականաբար պէտք է ձանձրանայ, պէտք է զզուի այդ կարծեցեալ արհեստի միակերպութիւնից։ Վերջապէս ով ձանձրանում է ուսուցչութիւնից — նա ուսուցիչ չէ։ ում համար այդ պարապմունքը անբովանդակ է թւում, կնշանակէ նա չէ ըմբռնել իւր պաշտօնի իսկական նպատակը, ով որ ուսուցչութիւնը միակերպ պարապմունք է համարում, նա նման է մեքենայական գործ կատարող հասարակ արհեստաւորին։ Մի խօսքով գանգատուելով իւր պաշտօնից, ուսուցիչը վիմիայն իրան է դատապարտում։

ԵՂԻՇԷ ԹՈՓՉԵԱՆ

(Շարունակելի)։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՆ·

Բաղդատելով այս պրուաճքը Հովիսիմեանց էն· Հբ· «Անակիզն բանն ասուաճ»՝ Ղևոնդեանց էն· Դ· «Անճառելի բանդ ասուաճ» և Վարդանանց էն· օ՚հ· «Նորահրաշ պատարաւր» պանեչելի շարականներն հետ՝ աւելորդ չենք համարում դնել այստեղ սոյն պրուաճքի մի քանի հատուածների հետ սակաւ ինչ նմանութիւն ունեցող այն հատուածները, որոնք գանւում են յիշեալ երեք շարականների մէջ: Ինչան և ի տես ընթերցողին դնում ենք «Դակ. Անճաւ· և Նոքահ·:

«Շարական· Սուրբոյ Վարդանացն· Աբրհամ[թիւն]»·

«դկ· Անթառամ սիրս ծնունդըք սիրեցեալք ի՚ք՚է·
իմաստուն ճարտարապետք հաստատութիւն եկեղեցւոյ·
զաւ ի նոյն յուսս շաւիղս թելադրիչք որդոց մարդկան·
աննախանձ առատուբ՚· զամենեսեան ճոխացուցէք:
Բանին հաւր բարբառոյ հետեւեցայք արժանապէս·
բնաւմբ խաչին թեթեւացեալք դիմեցայք առ զաւրութիւն·
ի քաղաքն անխախտելի· առ կարապետ ճանապարհին·
նախահրաւէր ուրախութեանն ժամանեալ ի վաեղումն:
Գանձին ծածկեցելոյ տենչմա՚ր վառեալք ի կեցաղումն·
առ ի սատացումըն փութացեալք երազաքայլ ոտիւք հոգւոյ·
ընդ պարգեւին ամփոփեցայք ըզպարգեւիչ փարթամութ՚ենն·
անկապուտ հաստատուն՚ առմամբ եղէք երջանկացեալք:
Դարձայք զարձումըն գովելի անստուերիւր ճանապարհաւ·
առ որ կոչեն ըզմեզաւորս ի խրախութիւն առատասանն·
եւ մաքրեցայք ի չարաչար գարձման տղմոյն ապտեղութեան·
[1] պայճառացեալ արեամբ ձերով ընծաեցէք հանդիսապրին:
[2] Երկնաւոր թագաւորին զինաւորեցայք արիաբար·
առ ի վանումըն բանսարկուին եւ որ նովաւ պատերազմէր·
նահատակեալք քաջութեամբ արկէք տապաստ ըզմոլորեալսն·
[3] եւ ընդալայք ի՚ք՚է ըզյաղթանակ անմահութեան:
Զաւրութեամբ հաւր զաւրութ՚են ի ձակատուն առաքինեալք·
[4] զանհաւատիցըն բազմութիւնն ապտաբար ընթապրեցայք·
[5] եւ ձերով հեղմամբ արեամբ պսակեցայք զեկեղեցի·

---

1 Նոքահ· Թ· պան Ղեղ· «ընդ նոսին պսակելով ի յերկնաւոր հանդիսապրէն»·
2 Նոքահ· Բ «Երկնաւոր թագաւորին զինաւ յաղթեալ պատերազմին»·
3 Անճաւ Բ· «զի ընկալցին ի՚ք՚էն քրիստոս զանապական փառաց պսակն»·
4 Ընդ· Գ «Ընթարեալք զմահու խրոխտումն ընդդէմ մեղացն վառեցան»·
5 Նոքահ· Ա· «վարդապոյն արեամբդ քով պսակեցեր զեկեղեցի»·
» Բ· «վկայ եղեալ հեղմամբ արեան պսակեցաւ»·
» Զ· «խաչելոյն վկայ եղեալ պսակեցաւ արեամբն իւրով»·

դարձեալ ի նոյն հաստատելով յիսկըզբանէ պայծառութիւն։
6 Յապէս բարոյն տալմամբ վերապարձայք ի ստորնայնոցս·
առ որ ըստեղծն իսկըզբանէ ի կերպարանս երանութեն·
լինել բարեառհվիկ եւ քաղաքին սրբո ժառանգք·
յորմէ չարին ելոյծ նախանձ· եւ ժանդացոյց ախտիւ մեզայս։
Ընդ մեծի պատարագին նախանձեցայք ի պատարագ·
7 ըզփրկականն ըմպել զբաժակ եւ մկրտեալ արեամբ ձերով·
ի քաւութիւն մոլորութեանն եւ ի լուծումն խաւարի·
յոր բռնութիւն չարասիրին խաբէութեամբ հաւանեցոյց։
Թշնամեացն անաւրինաց ընդդիմացայք ի պատերազմ·
ըզգալանիս որոգայթին նհանջումն առեալ ի վերջ·
8 եւ ընթանալ պատրաստաբար առ զաւրապլուխն առաքինեաց·
ի ձեռանէ նորա առնուլ ըզդիզեցիկ թագաւորութիւնն։
Ծողովելոց կատարելոց եւ անդրանկաց դրելոց յերկինս·
առթեցայք ի քէ որ ըզմեզայն ելոյծ կապանս·
լինել հաղորդ փառաց ուրախութեան եւ ցնծութեան·
ի քաղաքին վերնումն սիոն ի լուսափայլն երմ։
Ի քեզ սէր յուսացան· հալածականքն ի խաւարի·
փախուցեալք ի թշնամոյն եւ ի նորին որոգայթից·
որ կոչես ըզմեզաւորս յանապաշխար կենաց հանդիսան·
եւ նպելի բեռամբ շնորհես ըզքաղցրայոյզ կենաց պարգեւս։
Լուսատու խաւարելոց եւ այցելու մոլորելոց·
որ ըզդիշեր մեզայ լուծել զաշխարհակուլ համատարած·
արեգական արդարութիւն որ ի հաւրէ մեզ ծագեցար·
եւ մաշեցեր ըզսուտս մահու ի տեսակէ ազգի մարդկան։
Ի սաղարթութեան անձառելո առատաբար պարգեւատու·
եւ հաշտարար հոգւոյդ բաշխիչ ի խառնութեան մերո քահանայի·
ըզնոյն եւ այժմ շնորհեցեր եկեղեցեաց հայաստանեայց·
ի վերատին նորոգութիւն կործանելոց յանաւրինաց։
Ծանեալ քո ըզքոյն եւ հեռացար յուրացելոցն·
ժողովեալ ըզվարսաւելսն ի դառնաթոյն աւձին շնչման·
եւ կանկնեալ ի պլորմանէ ըզզարկուցեալսն պատրանաւք·
կենդանութիւնդ մեռելոց· եւ ցնծութիւն տրտմեցելոց։
Կոչեցան խոստովանողք եւ կարպեցան ընդ մարտիրոսս·
լըցուցին ուրախութիւք ըզզուարթնոց երկնից բանակս·
9 եւ մարին ի կոչարան փեսացեալ իմաստութեանդ·
յանպրաւական ընթերեաց խրախուսիս ընդ շինողին զուրախարանն։
Հաճեցաւ ա) սէր ընդ նուէր պատարագացն ողջակիզեալ·

---

6 Նաւա՛ն. Ե. «Ինական բարոյն պիտմամբ ընդդէմ մեզայն վառեցաւ»։
7 » Գ. «զփրկականն ըմպել զբաժակ եւ մկրտեալ արեամբն իւրով»։
8 » Ա. «Նորահրաշ պսակաւոր եւ զօրապլուխս առաքինեայ»։
9 Ա ՆՀ ա՛ Գ. «իմաստութիւք երեւելով ընդ փեսային մտին յաւդատան»։
ա) Թերևս—հաճեցաւ։

եւ ընկալաւ զարեանցն ընձայս ի փրկութիւն եկեղեցւոյ·
ի սիրտ ըղձատուցեալս սիրողիդ մեղաւորաց·
եւ մաքրողի ըղձիեզերս յանաւրէն կռապաշտութենէ։
Զայնեցեալ ըղձեռացեալսն մեծագոչ փողոյն ձայնիւ·
գալ ի տաճար մեծապատիւ ի սեանց եաւթանց հաստատելոյ·
ուրախանալ գինով բանին զոր խառնեցեր ուրախարարդ·
ի զուարճութիւն անըղձամաց հրաժարելոյ ի սպասութեանց։
Ղաւղեալ սարսեաց յիմարութիւն յայրբուցմանէ խմաստութենէ·
եւ տարագնաց յորոյ արբին ի թակուկաց քոց վերնայնոց·
որ անկեցեր արմատ բարի այգիդ քումմ սիրելոջ·
հաւատալով մշակողին· առաքողի ըղքեզ յայգին։
Ճըշմարտութիւն եւ ճանապարհ ուղեւորաց առ քեզ անձանց·
եւ կարապետ ալքաւարէն ճանապարհին անմոլարի·
ի յապարանսդ հայրենի ի հանդուցիչս աշխատելոց·
զորս ընդրեցեր ի մարդկանէ քաղաքակից առնել վերնոց։
Մորենեաց եղեր մշակ աճ և մարդ համանկամայն·
ի պտղաբեր փոխեալ բնութիւն ղ ի բնութենէ աւտարացեալդ·
[10] անկադրճ ագին դրախտին որ անկեցեր յերկրի ղնաչն·
եւ բարձրացար կամաք ի նա· եղեալ պտուղ հասարակաց։
Յաղթեցեր չար իշխանին բարւո բնութեանդ եւ նահատակ·
եւ կորզեցեր իշխանութեամբ զառ ի նմանէ յափշտակեալն·
զաւրութեամբ քո հզաւրաւ անյաղթելելի ըսպառապէնդ·
և զինուորաց քոց զաւրագլուխ հանդիսական ախոանիւց։
Նորաքանչ զարմանալեաւք ընդրես ծառայս քեզ եւ վկայս·
եւ գործակցեալ նոցա ի մարտ գերես զամուրս եւ զկորհուրդս·
եւ դանձես նոցա աւար անապական եւ պանծալի·
[11] ի վաեւրումն բերկրութեան ի հանդերձեալ քումմ գալստենն։
Շրջափակ աշտարակաւք ամրացուցեր զեկեղեցի·
[12] վկաից քոց բազմութեամբ ի քեզ յաւդեալ առաքինեաց·
զլուս անկեան կրկին որմոց յերկուց ազանց ժողովելոց·
[13] ամենայնիւ յառաջացեալ եւ անուանեալ հիմն և աւարտ։
[14] Ըսուցեր ամենեցուն արիանալ ընդդէմ մահու·
եւ շահել աստի վշտաւքս զանյաջորդ կենդանութիւնն·
կենդանիդ կենաց բաշխաւղ երեխայրի ննջեցելոց·
եւ ըսկիզբն յարութեան հանրականաց մահացելոց։
Զխաչիանեաց ինչ յերկրայնոցս զանձկութեն առ քեզ ջեռումն·

---

10 «Անճառելի բանդ աստուած որ վասն մեր եկեր ի խաչ՝
բարձրացար ի մէջ երկրի բարձեր զյանցանս նախաստեղծին»։
11 Անճառ. Բ. «երևեալք լուսազգեացք յաւուր մեծի քումմ գալստեան»։
12 Անվ. Դ. «ծաղիկք նիւթեղէնք յաննիւթ ծաղիկն յօդեցան»։
13 Նորահ. Ը. «յառաջեալ յամենեցունց գլուխ և աւարտ մարտիրոսաց»։
14 Անճառ. Զ. «Ուսուցին ամենեցուն երկրպագել քումմ աէրութեանդ».
Նորահ.. Ա. «վառեցար զինու Հոգւոյն արիաբար ընդդէմ մահու»։

եւ ոչ տանջանք անտանելիք կակղացուցին ըզփափաքանս·
ըզմեծանձանց նահատակացն հրեշտակաց մարմնաւորաց·
որոց եղեր հանդիսակից· ի չնաշխարհիկ տեսարանին։
Պսակաւք երկնաւորաւք եւ անթառամ փառաց լուսով·
զարդարեցեր ըզքաջացեալսն առ հակամարտ չարին մրցողս·
առաջին պսակաւորդ յորդորիչ զանգիտողաց·
ի չարաչար սպառնալեաց եւ յերկիւղ մահաբերաց։
Ջախեցին ըզբանսարկուն և զբնդ նովաւ իշխանութիս·
կոխելով վստահութեամբ ըստ սահմանեալ քումդ հրամանաց·
զաւրութիւնդ անհերքելի զաւրացուցիչ լքման մերո·
և յոգնազան յուսով բարեաց յանմահութի մեզ հրաւիրակ։
15 Թամկական ազգ աշխարհի եղեն երկնի քաղաքակից ք·
եւ դասակից վողորդութեան հոգոց սրբոց գերակաից·
16 երկորդութեանդ նուագիչք զերեքսրբեան փառատրութի՛ն·
եւ տեսողք անճառ լուսո միասնական Ա՛ծութեանդ։
Սրբեցին ըզտիեզերս մաքրագործ արեամբք իւրեանց,
17 եւ ուսուցին ամենեցուն Ա՛ծային իմաստութի՛ն,
արդարանալ որդոց նորա· որով՝ ինքեանք իմաստնացան·
եւ ըզխաւարն անգիտութեան հալածեցին յոգւոց մերոց։
Վանեցաւ մոլորութի՛ն որ ի չարէն վարդապետեալ·
եւ ծաղկեցաւ ճշմարտութի՛ն ի ք՛է մուծեալ յաշխարհ·
եւ եղեալք որդիք լուսո տարամերժեալք ի խաւարէ·
վասն լուսո գործոց բարեաց երանելի մարտիրոսացն։
Ցուընչեամբ պայծառացաք արեգակամբն արդարութեան·
եւ վկայիցն արեամբ ցնծամք մատուցողաց զայն ի նուէր·
եւ պարեմբք կրկնակաւք տաւնիւք մերո աղատութե՛·
յաւդեցելովք գեղեցկապէս ըստ վաելման իւրակութի՛ն։
Նախճանան ընդ զաւրութի՛ն երկնից ժողովք առաքինեացն·
եւ բերկրալի հաին դիմաւք ի հանդիսիցն իւրեանց ըսկիզբն·
ընդ նոսա վաելելով ի յաղթանակս աշխատութե՛ցն·
որպէս եղեն հաղորդ նմա ի չարչարանս ճեպելով։
Ցանկացան մահու նորա անբերելի յաւժարութեամբ·
եւ մատնեցին զանձինս իւրեանց ի նեղութի՛ս անտանելիս·
ունակութի՛ր սիրո նորա բոցակիզեալք եւ տապացեալք·
ի զովացումն դիմեցին որպէս յաղբիւր քաղցրահոսան։
Իւրաքանչիւրոք վկայիցն առանձնակի յաւժարութեամբ·
հասարակաց բերին աւգուտ վիրաւք ցաւոց եւ տանջանաց·
զամբառնալ հողանիւթիցս ի լուսերամ ջոկս անմոլմնոցն·

---

15 Նոր՝ւ. Թ. «Թամկական խումբ հազարաց և երեսնից Թիւ ընդ վեցից·»
մեր ձեռագրում—«Թիւն վեցից»։

16 » Գ. «դասակցեալ ընդ անմարմնոցն երրորդութեանն երգել զփառս»։

17 Տես Թիւ 14·

Եւ վաղվաղ յուսով արդեան ի պատրաստեալ նոցա պարգևան։
Փութացան դառնալ ի նոյն յորմէ անդաք խարէութեամբ.
Եւ ըզպատիւ կերպարանին ի սկըզբնատպին դարձեալ առնուլ
Եւ զառաջին փառացն ըզդեստն անձառելի յաւրինուածով.
Թագաւորեալ ընդ քրի յանապական արքայութեանն։
Քաղաքին պաճուճելո ի բիւրակերպ գեղեցկութեանց.
Յորում ոչ է խռովութիւն եւ ոչ մահու իշխանութիւն.
Ժառանգորդք եղեն վկայքն ըստ սահմանի անշուշտ խոստմանցն.
Եւ տիրապէս հաստատութիւբ զանձառ բարիսըն վայելողք»։

«Հարցն զմարտիրոսացն. Որ զՀրաշափառն ասայ։ Մկ. զարիացիքն.»
Թղ. 200ը 204ը։

Մի քանի լուսք շարականիս՝ մեր ենթադրած հեղինակի մասին։

Շարականիս այբբենական կարգը, նորա զերծմանաց և վեմ նիւթը, նրա համեղ և կոկիկ հայկաբանութիւնը և շատ քիչ հատուածների մէջ հեաեղողութեամբ մացրած բառերի և ոճերի զարձուածքները զարմանալի նմանութիւն ունենալով Վարդանայ «Նորահրաշ պսակաւոր» շարականի գրութեան և ոճին, որի հեղինակը ճանաչւում է սուրբն Ներսէս Շնորհալի, արդ՝ շարականս կարդալուց յետ անկարելի է որ բանադէտ ընթերցողը այս եզրակացութեան չգայ և չգտնի, որ, կամ այս շարականն էս գրել է Հռոմկլայի քնարերգուն՝ նա ինքն սուրբն Ներսէս, կամ թէ առատամիտ Ներսէսը զարմանալի ճարտարութեամբ նմանեցրել է իւր գրուածքը սրբան, եթէ ենթադրենք, որ սա իւր շարականից յառաջ է գրուած։ Թէ այսպէս, թէ այնպէս, թէ այս շարականը հրեշտակապօն Ներսէսի գրչի պտուղ չէր կարող լինել ես համոզւում եմ այն կէտից, որ նախ՝ Ներսէսի պատուական գրուածքների թանաքը դեռ չըչորացած, իրեն գգուող և մեծարող ժողովրդեան թախանձամբ նոքա կամ կարդացւում էին եկեղեցիներում, կամ ինքն Ներսէսը այլևայլ հանդամանքներից ստիպուած բազմաթիւ օրինակներով հանում և ցրւում էր նրանց ի տես աշխարհի. դեռ չեմ յիշում և այն, որ Ներսէսի ժամանակ հայի և յոյի տեղ ծառայելով գիտութիւն և ուսում հետապէս և անպակաս լինելով ազգիս ցաւերը գրող և ուսումնական անձինք, անկարելի էր որ նրանցից մէկն ու մէկը ի գիտութիւն ապագայի չյիշատակէր իւր յուշարձանում թէ այս երգի հեղինակն էս եղել է ինքը սուրբն Ներսէս։

Շարականս սուրբ Ներսէսին չընծայելու մէկ փաստն էլ այս է, որ Ներսէս սովորաբար իւր յիշեալ շարականի մէջ դիմելով Տառաձակ բացականչութիւններով Աստուածորդուն արիւնաներկ ընկած հայ նահատակներին և յանուն յանուանէ յառաջ կանչելով նրանց իւր սուրբ գրչի դիմաց, այլ ինն հրաձանքով դողում և դրուատում է, նա ամէն մէկին սուրբ պատերազմի մէջ պարսից դէմ ցոյց տուած իւր արիական քաջութեան և անվեհերութեան համար, այն ինչ այդ տեսակ հայրական բացականչութիւններ չկան սոյն շարականիս մէջ, իսկ այդ անում է շարականիս յարգելի հեղինակը լռելեայն, մեղմ և խուլ, այլ ինն եղանակով ու սրտով դովաբանելով Աստուծոյ մարտադիր քաջերի դերօրինակ գործքն ու արարքը։

Այսպէս ուրեմն շարականիս հեղինակը սուրբն Ներսէս չլինելով, այժմ դիմենք այլ միջոցների և դանենք թէ ո՞վ է եղել պատմութեանց էջերում իւր խոնարհ գլուխը թաղցնող այդ մեղրաբերան Յոհաննէսը։

Եկեղեցական մատենագրութեան կարգամ ս. Ներսէս Շնորհալու ժամանակից 48 տարի

բարձրանալով դէպի վեր (1117—1165), յո՛չ հաննէս անո՛ւանէ հայ եկեղեցուն գրով ու գըրչով ծառայող և յայտնի շարական գրող մենք գտնում ենք միայն Յովհաննէս սարկաւագ կոչեցեալ վարդապետին, որը իւր շատ գրական հիւթալի վաստակների հետ տուեց մեզ նաև սուրբ Ղևոնդեանց վերայ յօրինած «Պայծառացան այսօր սուրբք եկեղեցիք» գեղեցկահիւս շարականը, սակայն ի նկատի ունենալով «Ընթառամ սիրոյ ծնունդք» շարականիս մէջ արքայավայել կերպով ծանր ծանր նստած ու կանգնած հին հին ոճերի գեղեցկութիւնը, փարթամ փարթամ բառերի անլուծանելի հանգոյցով իրար հետ բռնուած ներդաշնակ միութիւնը, չենք սրանց վերայ հնութեան ակն յայտնի նշմարանք կրող և իւր աննման լեզուն, բնաւ երբէք այս գրուածքը չէ համապատասխանում Յովհաննէս սարկաւագի գրուածքին։ Ճմռռանամ ասել և այս, որ եթէ սարկաւագի մոքի ծնունդ լինէր նա, անշուշտ իւր ժամանակի բազմաթիւ և ճշմարտախօս մատենագրներից մէկն ու մէկը կմատնէր նրան մեր ձեռքը։ Թէ-րդ գարում ուր ապրում էր մեր խստակրօն Յովհաննէսը, այդ գարում գրեթէ ոչ մի գրական արգիւնք չէ կորել։

Յովհաննէս սարկաւագ վարդապետի ժամանակից 397 տարի սլանալով դէպի վեր (720—1117) մենք կգտնենք Թէոդորոս Քռթենաւորի աշակերտ՝ չարաշանդ Պօղիկեանց դէմ իւր թէժ հաւատով և առ Եկեղեցին ունեցած իւր տաք սրտով կռուող իմաստասէր կոչուած Յոհան Օձնեցուն, որի վարքը, ուսումը և գրուածքը ս. Գրքին մօտեցնելու համար, նրա հոգեզգօն վարժապետը ձեռքը չնեղով Աստուածաշնչի վերայ ասում էր իրեն, «վէր մանր զմատեանդ զայդ»,[1] և արդարև յաճախ յաճախ ուսումով նա այդ անմահացուցիչ մանանայն, պտղաբերեց մեզ համար համաձայն իւր անուանն Ա՛ծ Ցօնէ կոչուած տօների շարականները, այլև Երրորդութեան անունով երեք տառից մի տուն կազմած և այբբենական կարգով շարադրած ս. Հռիփսիմեանց վսեմագոյն Համբարձին։—«Ընսկիզբն բանն աստուած, որ վասն մեր համբեր մահու» ա), ուր տօնելի քահանայապետը առանց բացականչութեան և սրտի խըռովութեան ձիշտ Կոմիտաս Հայրապետի քաղցրը լեզուով լռիկ մնջիկ ստորագրում է սրբոց Հռիփսիմեանց անմեղ և աննման կուսանաց ամբիծ վարքը՝ ասելով,—«Ընթադրեալք զմահու խրոխտումն ընդդէմ մեզայն վառեցան, մերժեցին կործանեցին զմահահոտ զմեքենայսն»։ Նրանց հոգւոյ քաջութիւնը և առ Փրկիչն աշխարհի անբացատրելի սէրը՝ ասելով,—«Հրով հոգւոյն պինու վառեալք զհալածիչսն վանեցին. ծաղիկ նիւթեղէնք՝ յաննիւթ ծաղիկն յօդեցան»։ Նրանց կրած անտանելի չաչարանքը՝ ասելով,—«Լինաւք և քերանաւք զարեան վտակն հոսեցին. երջանիկ ձակատամարտք յայտնեցան անպարտելիք»։ Նրանց վերջին անգամ այս անցաւոր աշխարհից մի բան վերցնելը, և վերջին անգամ այս աշխարհից բերկրական հրաժեշտով բաժանուիլը՝ ասելով,—«Վերառեալ վկայօրէն զմարգարիտն հաւատոյ, տենչացեալ անճառ լուսոյն վերասլացան ի կեանս անմահ»։ Ահա այս պատուական գըրուածքի հեղինակին ենք ընծայում որպէս «Ընթառամ սիրոյ ծնունդքը», այսպէս էլ և սուրբ Ղևոնդեանց ե՛ւ «Անճառելի բանդ աստուած» Մանկունքը, որը և մեր շարականի Գրիչը նոյնպէս ընծայում է Յոհան քահանայապետին ասելով «զՂևոնդեանց անճառելի բանդ աճեն. վարդանացն. անթառամ սիրո ծնունդքն. Յոհաննու քահի է ասացեալ»։ Թղ. 223[ա]։

Մենք կարծում ենք այս Յոհանը, Յոհան Օձնեցին է։

Այժմ մնում է մեզ մի տարակուսելի խընդիր ևս լուծել, այսինքն թէ, ի՞նչու Գրիչը գրել է «Յոհաննու քահի էասացեալ» և ոչ Յոհաննէս քահանայապետի։

Այս սխալանքը եթէ արել է մեր Գրիչը մենք

---

1. Ցոհան իմաստ, 1833. Վեռ. 2.

ա. Այս շարականը սովորաբար ընծայւում է Ցոհան Մանդակունուն, իսկ «ոմանք Օձնեցւոյն տան» աւելացնում է շարականների հեղինակաց ցանկը. այս մասին կխօսենք յետոյ։

այդ վերագրում ենք միայն այն դէպքին, որ ինչպէս շատ գրիչներ ծանօթ չլինելով մեր ազգի մատենագրների իսկական անուան, նրանց գրուածքների և նոյն իսկ նրանց ապրած տարիների հետ, մի բան արտագրելու ժամանակ շփոթել են իրար հետ և ընծայել մի գրուածք միւսին, մանաւանդ եթէ նրանց հեղինակները եղել են միևնոյն անուան տէր մարդիկ, ինչպէս որ այս ակնյայտնի պակասութիւնները մենք տեսնում ենք Յոհան Մանդակունու և Յոհան Օձնեցու գրած եկեղեցական կանոնների մէջ, ուստի ես կենթադրում եմ, որ մեր գրիչն էս կամ «ՔՀԱի» բառը իւր հնադոյն շարականների նման գրել է կրճատ թերևս զօրութեամբ յիշեցնել տալով մեզ Յոհան Օձնեցուն, կամ նա արել է այդ սխալը անգիտութեամբ, թերևս ծանօթութիւն չունենալով Օձնեցու քահանայապետ լինելու մասին, և կամ թէ այդ սխալանքը արել է մի ուրիշ գրիչ և նա անփոփոխ արտագրել է միայն իւր ցուցակում: ապա թէ ոչ Ը-րդ դարից մինչև ԺԲ-րդ դարը բացի վշտակիր Յովհաննէս պատմաբան քահանայապետից ի՞նչ բազմահանճար Յոհաննէս քահանայ ունինք, որ կարողանար գրել «Ընթառամ սիրոյ ծնունդք» «Անսկիզբն բանդ աստուած» և «Անճառելի բանդ ած», որոց նիւթը կարծես թէ մտածուած լինին մի օրում, և գրուած մի օրում:

Այս երեք շարականները Յոհան Օձնեցուն ընծայելու համար եթէ մի ուրիշ փաստ չունենանք, բաւական են միայն նախ այն փոքր տարբերութիւնները, որոնք գտնում ենք վերջին երկու շարականների մէջ, և որոնք նոյն իսկ սկզբից բառով ու բանով համապատասխանում են իրար հետ.

«Անսկիզբն բանդ աստուած որ վասն մեր համբեր մահու»:

«Անճառելի բանդ աստուած որ վասն մեր եղեր ի խաչ»:

Երկրորդ, թէ տպագիր և թէ ձեռագիր շարականները Յոհան Օձնեցուն են ընծայում այն երեւելի շարականները, որոնք գրուած են Աւագ տօների վերայ. սակայն մենք գիտենք պատմութիւնից, որ Հայաստանեայց եկեղեցի Ս. Հռիփսիմեանց, Ս. Գևոնդեանց և Ս. Վարդանանց տօները երբէք փոքր տօներ չէ համարել և այս տօները իրենց սկզբնաւորութեան օրից ընդ միշտ տօնուել և կատարուել են աւելի շքեղ, աւելի փառաւոր հանդէսներով քան թէ Դաւիթ մարգարէի, Ստեփաննոս նախավկայի, Որդւոյն Որոտման և Պետրոսի և Պօղոսի առաքելոց տօները:

Ուստի եթէ համոզեցուցիչ են մեզ համար Շարականների տուած այն վկայութիւնները որ յիշեալ տօների շարականները գրել է Յոհան Օձնեցի Հայրապետի պէս մի տաղանդաւոր գրիչ, նոյնչափ պիտի համոզուած լինինք որ յիշեալ երեք շարականները գրել է նոյն հանճարեղ Հայրապետը, որոց ճշդրիտ ապացոյց միայն կարող են լինել ա. նրանց այբբենական կարգն ու դասաւորութիւնը. բ. նրանց յարև նման սահուն և ընտիր լեզուն և նիւթը, և գ. նրանց միևնոյն չափով և միևնոյն ուղղութեամբ սկսուիլը և վերջանալը:

Այս երեք շարականները Ս. Յոհան Օձնեցուն ընծայելու իրրև մեր վերջին փաստի մէջ ենք բերում և նորա գրած խմաստալից ճառերից մի քանի հատուածներ, որոց մէջ ցոլացած համանման գեղեցիկ բառերի, խօսքերի, զարմանածքների և ոճերի տիպն ու նմանութիւնը ոչ միայն մենք պարզապէս տեսնում ենք և այդ շարականների մէջ, այլ և նորա ծայրէ ծայր կարծես թէ մի տեսակ ձրդաքաղ լինին արուած իւր ճառերից ճիշդ այնպէս, ինչպէս մի խնկելի պարտիզից անդուտութեամբ կամ գիտութեամբ փոխադրելինք մի ուրիշ պարտէզ նոյնանման տունկեր. մի գերօրինակ հմտութիւն՝ որով սուրբ Օձնեցին առանց մի քայլ անգամ շեղուելու իւր պերճախօս լեզուից, իւր գեղուն բառ ու բառից ու բանից և միանգամայն իւր քրիստոնէական բուռն սիրուց և վառ ոգևորութիւնից, եթէ կարելի է այսպէս ասել, կազմել է իւր գրած շարականներից ճառեր, իսկ իւր գրած ճառերից շարականներ. զօ.

ՅՈՀԱՆ ԽՐԱՍՏԱՍԱՆԻՐ 1833· ՎԻՆՆԵՏԻԿ·

«Եւ ընդ գազանացն կռուել յարնակմունս՝ զի մի .. ցրուեսցին .. գեղեցկապէս միաւորեալ քրիստոսի անդամքն» 4·

«Բարեփառութեան ղամբարօք փայլեալ պայծառանային» 57·

«Ի լաց յինքենէ հալածէր զմահն և զապականութիւն ... անճառելեաց երթեալ հանդիպանայր կենաց» 69·

«Աստուածայնովն զինազարդեալ սպառազինութեամբ՝ հաւաքեսցուք ի հեղեղատնաց կենցաղոյս» 46·

Նոյնանիշ բառերով· «Ծառայեցուցանել զծառայեցուցիչն հրամայեաց ծառայեցելոյն» 75·

«Կամաւորապէս կրել կարողութիւն է միայն քրիստոսի (զչարչարանս)՝ և որք ի նմանէ զօրացեալք զորդեգրութեանն արժանաւորեցան ընդունել փառս» 78·

«Ի վերայ երկրի զերկնայնոցն հանդիսանան կատարել վարս» 39·

«Ոգա ... ընդ յատակս բագնին տապալեալ ցրուէր զկուռս՝ կռապաշտիցն աստուածապաշտութեան շաւիղ ցուցանելով» 44·

«Եկեղեցիք հաւատացելոց աստուածսիրութեանն փափագանօք չինեցան» 40·

«Ննկագործողին տնկեալ զդրախտն և ի նմա դնելով զմարդն հրամայեաց անդուստ վայելել նմա» 67·

«Գեղեցկագոյն հաւատոյ ոտիւք առ ճշմարտութիւնն ի վեր կանգնեալ» 54·

«Ի լաց վանել զչարութիւն բանսարկուին և զլոյր տիեզերս հնազանդեցուցանել ընդ առաքելական քարոզութեամբն» 106·

«Դնելով յիմաստութեանց մերոց պարսատիկս .. չաղխեսցուք զվիհագոյն .. ի նոսա անդամ ... աւար առնելով և գերելով զՀպարտացեալ նոցա խորհուրդս» 46·

«Ննյողդողդելի հաւատով զՆորայն հիմնեցուցին զեկեղեցի» 63·

«Մեծագոչ հնչմամբ աղաղակմք ի լընդհանուր.. արարածոց տեսակս ասելով - Օրհնեցէք ամենայն գործք տեառն զտէր» 19·

ՇԱՐԱԿԱՆՔ

Ընդ· ։· Ծուժկալեալք ի փորձ բանտից գելեբանաց և կապանաց ի մրցմունս գաղանաց սրոյ և հրոյ մենամարտեալք»·

Ե· «զամբարամբ լուսոյ կենաց զխաւար մեղաց փարատեցին»·

Ը «յաղթեցին կարեաց մարմնոյ և հեշտալի գրգռանաց .. շնորհազարդ փայլմամբ փայլեալք ի յերկնային նաւահանգիստն»·

Ը· «վերառեալ վկայօրէն զմարգարիտն հաւատոյ ... վերասլացան ի կեանս անմահ»·

Է «չարաչար չարչարանօք զչարին մուրհական կապտեցին»·

Ընծաա· ։· «ծաւալեալ զլոյս գիտութեան յոգիս արանց կատարելոց՝ կամաւոր յօժարութեամբ կատարեցան յանօրինաց»·

։· «Թօթափեալք զբուն մահու զուարթնոց երկնից հետևեցան»·

Ե· «զեկավարք հոգևորք զալիս մեղաց խորտակեցին՝ ճանապարհ մեզ հորդեցին ի յերկնային նաւահանգիստն»·

Ը «յառաջեալ յամենեցունց յովսէփ ընտրեալ յաշակերտացն ... չինեցաւ տաճար փառաց սրբութեան անմահ բանին»·

Ընծաա· Ի· «տնկագործ ադին դրախտին՝ որ տլնկեցեր յերկրի զնաչն»·

։· «տեղիմամբ վառեալք ի կենցաղումս առ ի լուսացումն փութացեալք երագաթռիչ ոտիւք հոլովոյ»·

Ե· «երկնաւոր թագաւորին զինուորեցեալ արիաբար առ ի վանումն բանսարկուին ... նահատակեալք քաջութեամբ արկէք տապաստ զմոլորեալսն»·

Իէ· «նորասքանչ զարմանալեօք ընտրես ծառայս քեզ և վկայս՝ և գործակցեալ նոցա ի մարտ գերես զամուրս և զխորհուրդս»·

Իը· «ամրացուցեր զեկեղեցի վկայից քոց բազմութեամբ ի քեզ յօդեալ առաքինեաց»·

Իէ· «ձայնեցեր զհեւացեալսն մեծագոչ փողոյն ձայնիւ գալ ի տաճար .. ի սեանց հօթանց հաստատելոց»·

ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԸՄԱՏՈՒՆԻ·

(Շարունակելի)·

ՀԱՅԿԱԿԱՆՔ*

Տեղեկութիւններ Արամի մասին (ծ-ը դարի գրող)։ Այլ և Անանիա Մոկացու մասին։

Արամի անունը մեր «Հին Դպրութեան» պատմութեանց մէջ մոռաց չէ դեռ ևս։ Այս գրոյն միակ մի երկասիրութիւնն է մեզ յայտնի և այն միայն մի ձեռագրում (տես § Զ)։ Այդ գրուածքի վերնագիրն է. «Թուղթ Արամայ. Զոր գրեաց պատասխանի Առումոյ Անձաւայեցոյ իշխանի ի սակս պէսպէս հարցմանցն»։ Գրուածքի սկզբնաւորութիւնն է. «Ատուա-
«ծապահ և ատուածասէր իշխանիդ իմոյ մե-
«ծագահի. Ա՞ծատունկ իմասիցդ գիր և
«հրաման եհաս առ իս. զոր ընթերցեալ յոյժ
«ուրախ եղէ զա՛յ, որ բազմաշառաւիղ հա-
«ւատոյ քոյ և հոգեհանճար խոհականու-
«թեանդ՝ զպատուդ խոնարհութեան չնորհաց
«առ ընդունելոյ զաղքատիմայ իմոյ գձառս
«ողբերգութեան առ ապէտս մանկանց եկեղե-
«ցոյ կենդանաբաժին որբութեամբ օտարա-
«ցեալ յերկնային մեծութենէն, որ ի տան
«տեառն անգեալս և ի գաւիթս աստուածոյ
«ծաղկեալս. նաև որ զիշոյն մեզայ զղանա-
«զան տեսակս խոնարհեցայք հարցանել ցիս.
«թէ ո՞րպէս իմանի տարբերութիւնք ե՞ց և
«թիւնաւորութիւնք յերկարաւելիք. ո՞րպէս
«հնար է զբազմացն խայթոց՝ ի մարմին ժո-
«ղովեալ՝ որոնել, ըստ միոյն առնել և զելսն,
«զի համբերել կարասցէ ցատոյն»։

Գրուածքի վերջաւորութիւնն է. «Եւ որ
«զջուրն ի գինի փոխեաց՝ զձեր տրտմութիւ-
«նըդ յուրախութիւն փոխեսցէ, ի տէր խընա-
«դալ ձեզ ի տարեկանն կենդանութեան տօ-
«նըս կատարել»։ (Զեռ. Ընդ. 407—416)։

Գրուածքի լեզուից և մի քանի ուրիշ հան-

*. Տես նախընթաց համարը։

դամանքներից ես այդէն ենթադրում էի, որ Արամը պէտք է գրած լինէր ծ-ը դարում, երբ՝ բարեբաղդաբար՝ այդ մասին յաջողուեց ինձ գտնել և ժամանակակից վկայութիւն։ Անանիա Մոկացի կաթողիկոսը իւր վիճաբանական թղթերից մէկում (ընդդէմ Յոսրով Անձևացու, Նաբէկ «ցո- Հ.Ը.) ասում է. «Այս են հանդամանք Բ և Գ. եպիսկոպոսաց՝ այլոցն համաձայնութեամբ և ընծայական թղթով մայրաքաղաքացոյն ձեռնադրել պատրիարգ, և ոչ լոկ եպիսկոպոս. ուսիր ոչ որպէս քեզ Թուխ Հայրապետն՝ վասն Աւան քաղաքին կամ այլքայական գրան եպիսկոպոս գոլով՝ այսքանօք միայն առաւելուլ գահերիցութեամբ, ապա թէ ոչ՝ պարտ էր ի տեսլեանն սբ. Լուսաւորչին գվիսպետութիւնն ի վր Աբիանոսի տեսանել, զի նա կարգեցաւ վերակացու արքայական գրան բանակին, որում և՝ ըստ քեզ՝ աւելորդ էր քան զԱբիանոս այլում կաթողիկոսի եպիսկոպոսի, այսինքն Թատգիսի կամ այլ ումեք։ Իսկ ապա ելուսաղէմի և Աղեքսանդրի և Անտիոքայ եպիսկոպոսքն յոյժ կըրասերագոյնք են, վասն ոչ զոք ունել[ոյ] Թագաւոր, ի ձեռն որոյ գահափառեալ բարձրանալին քան զընկերսն։ Ընդ[ի]ր ոչ կամիս հաւանել օրինական ասացելոցն, որ ի միաձնակատութիւնն կրթել միշտ հանդիսանայր. գ անդամ ի տարւոջն յանդիման՝ լինել օրինադրէ բոլոր Իսրայէլի ելանել ի տեղին, զոր ընտրեսցէ ա՛ր, և զայն ոչ դատարկաձեռն։ Այլ գիտեմ զի պարտաւի առ ի քէն «ոչ դատարկաձեռն» յիշատակել որ ասես Ո՞վ կացոյց զնա կապալատեր կաթողիկոսի, և զայն ոչ ածես զմտաւ եթէ զբոլոր զձեռամբ անկեալքս քոյ ո՞վ կացոյց քեզ պարտապան, և անողորմապէս գանձել տոկոս խուռն զօշաքաղութեամբ, ո՞վ զերազանցեալդ քան զՊօղոս և ի յերկրորդն ժամանեալ յերկինն և զևան անձառականն լուեալ. անվաւել քեզ համարեալ Պօղոսի մեծաձանութիւնն, առ ի ժողովել զպատուն երբեմն ի կողմանս Ասորոց փութալով ինքն, և բառնաբաս ելանել յԵրուսաղէմ առ ի պաշտել զսուրբսն, և երբեմն ի

կոչման Աքայեցւոց և Թեսաղոնիկեցւոց, բաղում նախանձայորդոր հնարիւք վաղվաղել ի պաշտօն սրբոցն որ Յերուսաղէմ: Այլ դու Ափրին աշակերտեալ, անցուցեր զնովաւ, զի նա թերևս զպտուղ երախայրեացն միայն արգելուլ բաջաղէր, այլ դու բնաւին զհայրապետական բառնալ զաթոռն ձեռնարկեցեր, զի անհոգ [յ]ընծայաբերութենէ ըստասպիս կեանս»: (Նորին Անանիայի Հայոց կաթողիկոսի· «Բայց արդ սակաւուք···»):

Անանիա Նարեկացու Ռդ[եբ·]վ պարզուսմ են ոչ միայն այս հայրապետի և Նարեկեան դպրոցի ընդհանրապէս՝ և մանաւանդապէս Խոսրով Անձևացու՝ մինչև այժմ վիճելի, լաւ չհասկացուած և կամ գիտութեամբ քօղարկուած յարաբերութիւնները, այլ և Արամի ժամանակը և նշանակութիւնը: Խոսրով Անձևացին Արամի աշակերտ է կոչուսմ կամ՝ որովհետև իսկապէս նրա աշակերտն էր և կամ՝ որովհետև հետևողն էր նրա վարդապետութեան: Տեսանք որ Արամի մեր ձեռքն հասած միակ թուղթն էլ ուղղուած է՝ ա[ն]ձևացոց Ատոմ իշխանին: Խոսրով Անձևացու ժամանակակից և ազգական Անանիա Նարեկացու և Անանիա Մոկացու յարաբերութեանց մասին մենք արդէն առիթ ենք ունեցել մեր ենթադրութիւնները յայտնելու, որոնք այս նոր փաստերով աւելի ևս հաստատուսմ են (Տես մեր հր· «Գիր Խոստովանութեան», յառաջաբան):

Խնդիրն աւելի ևս կպարզուի, երբ կհրատարակենք Անանիա Մոկացու, արդէն տպագրութեան համար բոլորովին պատրաստ, Թղթերը, ծանօթութիւններով և բնագրի բաղդատութեամբ: [Այս թղթերն են· Ա· «Ցեառնէն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս աղաստամբութեան տանն Աղուանից· որ ընդ ժամանակս ժամանակս լեալ էցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի Աթոռոյն» (շատ հետաքրքրական և լի պատմական տեղեկութիւններով)· Բ· «Ցեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի· Պատճառ յաղագս զի[ն]ոսրով նզովելոյն զԱնձևացւոց եպիսկոպոսն»· Գ· «Նորին Ցեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի· Յաղագս որ ասեն թէ՝ մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին, և վասըն մի լինելոյ կոչմանն»· Դ· «Նորին Ցեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի· «Բայց այլ սակաւուք···»:] Անանիա Մոկացի կաթողիկոսը՝ թէև նեղ վանական կրթութեամբ անձն, իւր հակառակորդներից պակաս պիտութեամբ և հետևակ գրիչ, սակայն մեր կաթողիկոսների շարքին մէջ նշանաւոր և առաջնակարգ տիպերից մէկն է· անկոնջ, որոշ դաղափարի ծառայող, նախանձաւոր Լուսաւորչի Աթոռի միապետութեանը և իշխանութեան սահմանների, կամքի տէր, անվհեր, անձնազոհ, խիստ բայց քաղաքագէտ և ամեն յարդանքի ու լուրջ ուսումնասիրութեան արժանի մի անձնաւորութիւն: Ինչ վերաբերում է Պոմ Անյաւոյնոյ եղբօրն, որի հրամանով Արամը գրեց իւր Թուղթը, կարծում եմ որ այս նոյն այն Ատոմն է, որ յիշուսմ է հետևեալ յիշատակարանների մէջ· «Թարգմանեցաւ վկայաբանութիւն ծառայիս Աստուծոյ (Արգմահի) յասորի գրոց ի հայ, հրամանաւ տասուածապահ տեառն Գուրգենայ Արծրունւոյ Անձևացւոյ տեառն, յիբ (873) թուականութեանս Հայոց· յօգնականութիւն անձին իւրոյ և ամուսնոյ իւրոյ Հեղինէի աստուածասիրի, և որդւոց իւրոց Տաճատայ և Պոմայ» (Զարբ· Հին Դպ· եր· 514):

— «Նաև թուականին գրուած մատենի մը մէջ ալ կը յիշատակուի Ատոմ Անձևացի, պատանեզրդ դպրոն աւ[յ]ր Հայոցդին մէջ ապրած, որուն հրամանաւը՝ Արտաւազդ Մաղազունեաց (Մաղազունեաց ?) տէրն «բազայայաւեաց զսուրբ պատուիրանս» (Զարբ· Հին Դպ· եր· 550):

— Կայ թուղթ մ'ալ յանուն Թոմայի(?) առ Պոմ եղբայն: (Զարբ· Հին Դպ· եր· 550):

Արդեօք այս Ատոմ իշխանը միևնոյն անձն է Ատոմ Անձևացեաց եպիսկոպոսի հետ: (Տես Զարբ·—550):

Արամը ծագելց ամենայն հաւանականութեամբ Թ-դի վերջերը և Ժ-դ դարի սկզբին,

Խոսրով Անձևացւոց առաջ։ Վերջինիս մասին Անանիա Մոկացին ասում է. «Քանզի [ի] ՆԻ (954) թուականիս և ի Դիան ամի մերոյ դիտաւորութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձևացեացն. այր համեստ և գիանաւոր, և ալեօք ծերութեամբ զարդացեալ. յանկարծակի իբրև ի դիւական հոգւոյն շարժեալ, առանց իւրիք հակառակութեան, սկսաւ նախ զբարբառն դեղակի արձակել ըստ յունարէն լեզուոյն զկիրակէն կիւրիակէ կոչել և զերուսաղէմ՝ Եռուսաղէմ և որ սոցին նման է՝ ի սոյն յառեալ բարբառ։ Իսկ զկնի այսորիկ ապա այլ յառաջեաց բաջատմունս անհեղեղս. քանզի հրամայէր մինչև մօրուս եկեալ՝ զզլուխ խուզել մանկանց, թէ այսր աղագաւ կոչի կլտրիճ. և զկնի մորուացն զվերան ապա թողուլ, երկայնել և մանիլ ցսրունսն, զի այսր աղագաւ կոչին մանուկ։ Եւ այս երկարեալ առանգամ մի, ապա և յեկեղեցի եմոյծ զբաջաշմանն իւրոյ պղպեղն, քանզի յաղագս քրիստոսեան խաչին այսպէս ասէր, թէ Այն խաչն որ քահանայքն աւրհնեն և այլ, զոր ոչ աւրհնեն, միապատիւ է և աւելորդ դաւրհնելն վարկանիմ։ Եւ յայսոսիկ ներեալ մեր նմա, ապա սկսաւ այլ իմն նոր հերձուած աւանդել, մուծանել յեկեղեցի աստուածոյ, քանզի ասէր. Մի պատիւ և մի փառք հրեշտակաց և հրեշտակապետաց, ըստ նմին՝ մի փառք և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին... և զբանդ «կոչումն» լուծումն ասէր և ոչ կրկին պատիւ հայրապետութեանն։ Եւ առաւել քան զսոյն ի նոյն միտ յաւել, զոր աղաչեալ մեր բազում անգամ՝ դառնալ նմա [յ]այնմ անուղղայ և մահաբեր խորհրդոց, զոր թէև արտասուօք իսկ խնդրեցաք, սակայն ոչ կամեցաւ ուղղել, զոր հարկեալ ի հրամանէ այ կարել հրեղէն սրոճն և զրաժինն ընդ կեղծաւորան գնել, որ և զնոյն թօշակ տարաւ առ հանդերձեալն պաշար կորստեան, զի ոչ զղջացաւ մինչև ի վերջին շունչն, վասնորոյ հարկեցաք զրել զայս մնացական կտակ առ յապա եկելոցն, զի զգուշասցին յայնպիսի ընդվայրեայծ չնութեանց և ուղղութեան նկատեսցեն զաւելուած առ հանդերձեալ կեանսըն, զի շատ է աւուրն չար իւր» (Անան. Մոկացի. Պատճառ յաղագս զԽոսրով նզովելոյն. անտիպ։ Տես և Կիրակոս պատմ. և Ուռհայեցին)։

Անանիա Մոկացու, Անանիա Նարեկացու և Արամի անտիպ գրուածքները կհրատարակուին մի առ մի տորով կամ առանձին առանձին, ըստ յարմարութեան, երբ այդ ինձ հնարաւոր կը լինի։ Տես և ի հր. «Գիր Խոստով.»։

ՄԻԱԲԱՆ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 461 առ Մարգար Պօղոսի, որով գովէ զազգօգուտս և զգովելի ինքնայօժար ձեռնարկ նուիրատրութեան նորա միոյ հոյակապ տան արժողութեամբ քսան հազար րուբլեաց ի նպաստ ծխական գպրոցաց Հայոց Ստաւրապօլ քաղաքի, ի մշանջենաւոր յիշատակ Պօղոսեան տոհմին։ 18 Նոյեմ. 1893։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 470 առ Սարգիս, Յովհաննէս, Նիկողայոս և Աթանաս Ծամշարեան եղբարս, որով գովէ զկրօնասիրութիւն և զազգասիրութիւն ոգւոյ տպագ յուցեալս արդեամբք և գործովք իսկ, առաքելով 17000 րուբլիս ի տնօրինել զարժանի ման կրթութեան Հայազն մանկանց։ 19 Նոյեմ.։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 471 առ Նոր-Նախիջևանցի ազգայինս բնակեալս ի Մոսկուա, որով

Խոսրով Անձևացւոց առաջ։ Վերջինիս մասին Անանիա Մոկացին ասում է. «Քանզի [ի] ՆԻ (954) թուականիս և ի Դիան ամի մերոյ դիտաւորութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձևացեացն. այր համեստ և գիանաւոր, և ալեօք ծերութեամբ զարդացեալ. յանկարծակի իբրև ի դիւական հոգւոյն շարժեալ, առանց իւրիք հակառակութեան, սկսաւ նախ զբարբառն դեղակի արձակել ըստ յունարէն լեզուոյն զկիրակէն կիւրիակէ կոչել և զերուսաղէմ՝ Եռուսաղէմ և որ սոցին նման է՝ ի սոյն յառեալ բարբառ։ Իսկ զկնի այսորիկ ապա այլ յառաջեաց բաջատմունս անհեղեղս. քանզի հրամայէր մինչև մօրուս եկեալ՝ զզլուխ խուզել մանկանց, թէ այսր աղագաւ կոչի կլտրիճ. և զկնի մորուացն զվերան ապա թողուլ, երկայնել և մանիլ ցսրունսն, զի այսր աղագաւ կոչին մանուկ։ Եւ այս երկարեալ առանգամ մի, ապա և յեկեղեցի եմոյծ զբաջաշմանն իւրոյ պղպեղն, քանզի յաղագս քրիստոսեան խաչին այսպէս ասէր, թէ Այն խաչն որ քահանայքն աւրհնեն և այլ, զոր ոչ աւրհնեն, միապատիւ է և աւելորդ դաւրհնելն վարկանիմ։ Եւ յայսոսիկ ներեալ մեր նմա, ապա սկսաւ այլ իմն նոր հերձուած աւանդել, մուծանել յեկեղեցի աստուածոյ, քանզի ասէր. Մի պատիւ և մի փառք հրեշտակաց և հրեշտակապետաց, ըստ նմին՝ մի փառք և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին... և զբանդ «կոչումն» լուծումն ասէր և ոչ կրկին պատիւ հայրապետութեանն։ Եւ առաւել քան զսոյն ի նոյն միտ յաւել, զոր աղաչեալ մեր բազում անգամ՝ դառնալ նմա [յ]այնմ անուղղայ և մահաբեր խորհրդոց, զոր թէև արտասուօք իսկ խնդրեցաք, սակայն ոչ կամեցաւ ուղղել, զոր հարկեալ ի հրամանէ այ կարել հրեղէն սրոճն և զրաժինն ընդ կեղծաւորան գնել, որ և զնոյն թօշակ տարաւ առ հանդերձեալն պաշար կորստեան, զի ոչ զղջացաւ մինչև ի վերջին շունչն, վասնորոյ հարկեցաք զրել զայս մնացական կտակ առ յապա եկելոցն, զի զգուշասցին յայնպիսի ընդվայրեայծ չնութեանց և ուղղութեան նկատեսցեն զաւելուած առ հանդերձեալ կեանսըն, զի շատ է աւուրն չար իւր» (Անան. Մոկացի. Պատճառ յաղագս զԽոսրով նզովելոյն. անտիպ։ Տես և Կիրակոս պատմ. և Ուռհայեցին)։

Անանիա Մոկացու, Անանիա Նարեկացու և Արամի անտիպ գրուածքները կհրատարակուին մի առ մի տորով կամ առանձին առանձին, ըստ յարմարութեան, երբ այդ ինձ հնարաւոր կը լինի։ Տես և ի հր. «Գիր Խոստով.»։

ՄԻԱԲԱՆ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 461 առ Մարգար Պօղոսի, որով գովէ զազգօգուտս և զգովելի ինքնայօժար ձեռնարկ նուիրատրութեան նորա միոյ հոյակապ տան արժողութեամբ քսան հազար րուբլեաց ի նպաստ ծխական գպրոցաց Հայոց Ստաւրապօլ քաղաքի, ի մշանջենաւոր յիշատակ Պօղոսեան տոհմին։ 18 Նոյեմ. 1893։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 470 առ Սարգիս, Յովհաննէս, Նիկողայոս և Աթանաս Ծամշարեան եղբարս, որով գովէ զկրօնասիրութիւն և զազգասիրութիւն ոգւոյ տպագ յուցեալս արդեամբք և գործովք իսկ, առաքելով 17000 րուբլիս ի տնօրինել զարժանի ման կրթութեան Հայազն մանկանց։ 19 Նոյեմ.։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 471 առ Նոր-Նախիջևանցի ազգայինս բնակեալս ի Մոսկուա, որով

յայտնէ թէ հաճութեամբ սրտի ընկալեալ է զգումարն 3000 րուբլեաց ի ձեռն Եմմանուէլի Պօղոսի, ի նպաստ բազմաեաւակ կարեաց Մայր Աթոռոյս։ 20 Նոյեմ։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 492 առ Գաւառանակիրն իւր Սրհակ Ծ. վարդապետ Ադամեանն, որով շնորհէ նմա լանջախաչ վարդապետական ի նշան բարձր գոհունակութեան իւրոյ։ 30 Նոյեմ։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 517 առ Տիկին Տիրուհի Մ. Բալասանեանն, որով օրհնէ զիշատակ բարեպաշտ առն նորա սակս կառուցելոյն րուբլիս չորս հարիւր ի տարւոջ՝ զմի քառորդ մասն արգեանցն յերկուց կալուածոց իւրոց, հաստատեալ ամի ամի ի նպաստ վարժարանի ս. Նշան վանուց։ 11 Դեկտ.

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 655 առ ազգային վարշամ քաղաքի, որով յայտնէ զգոհունակութիւն իւր առ առաքումն 400 րուբլեաց յօգուտ Մ. Աթոռոյ։ 27 Դեկտ.

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 628 առ Սուբխան եպիսկոպոս Պարզեան՝ Առաջնորդ Ատրպատականի, որով շնորհէ նմա զվարքեպիսկոպոսական պատիւ։ 27 Դեկտ.

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 639 առ Բագրատունեակ ազնուտոհմի Տիկին Եղիսաբեթ Սարգսեան, որով օրհնէ զիշատակ բարեպաշտ առն նորա Պօղոսի Սարգսեանն, սակս կառուցի 5000 րուբլեաց, ի բանալ ծխական դպրոց իմն ի Հացի գեղջ և կարգէ զՏիկինն հանգամանալուհի նորաստացելի դպրոցին։ 27 Դեկտեմ։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 11 առ Սիմէոն Պատրեան որ ի Շուլավէր, որով դրուատէ զնա սակս կատարելոյն սեպհական ծախիւքն օրիորդական դպրոց և ապահովելոյն մշանջենապէս և բաղարեր անուանել զդուստրս Մարիամն Գայիանեան, յանուն սիկին Գ. Պատրեանի և յետ մահուանն՝ Գայիանեան—Պատրեան։ 10 յուն. 94։

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 107 առ Պատ. Հոգաբարձութիւն ս. Փրկչեան Հիւանդանոցի Կ. Պոլսոյ, ի պատասխանի շնորհաւորական գրոյն ուղղեալ առ Ինքն ի մուտս Նոր տարւոյ, որով օրհնէ զգործս ձեռաց նոցա, զամենայն պաշտօնեայս, զհիւանդս և զտնանկս և միանգամայն զանմահ յիշատակ հոգելոյս Բարեբարայ Հասատատութեանն և պատուիրէ յարատևել ի ջան և ի գործ առ ի բեղմնաւորել զսահանձեալ գործն կարի մարդասիրական։ 8 Փետր։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 108 առ Դերապատիւ Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան և առ բարեշնորհ երկոտասան սարկաւագունս որ ի Դպրեվանս Արմաշու, ի պատասխանի ուղերձի, որով գովէ զնպաստակ նոցա և յորդորէ լինիլ յարատևող ընթացիւ նախնեաց մերոց, շահել զկեանս բարի և ազգօգուտ գործովք ի վառս ազգի և Հայաստանեայց եկեղեցւոյ, որ կարօտի զարգիս անձնուէր հոլուաց։ 8 Փետր։

*
* *

կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 160 առ Պատրիկ Էվէնեան կիւլպէնկեան, որով միսիթարէ զսգացեալ սիրտ համայն կիւլպէնկեան գերդաստանի ընդ տարաժամ մահ Յովհաննէս էփ·ի և Տիկնոջն որոց մանկէ յաւիտենական հանգիստ և մնայելոյ կեանս երկարս և յաջողակս, ի լինել արժանաւոր ժառանգ կիւլպէնկեան առաքինի գերդաստանին։ 15 փետր·

*
* *

կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս՝ առ Առաքնորդն վրաստանի և Իմերէթի Գերդ·էորգ եպիսկոպոս Սուրէնեան, որով հրամայէ վարել զգործ և պընտրութիւն հոգաբարձուց Մարիամեան—Յովհաննեան ուսումնարանին՝ ըստ բայարձակ որամադրութեան կոնդակի Եջմնկայիշատակ Հայրապետին Գէորգայ Դ·ի, առանց այլ իրիք կարգադրութեանց և շեղմանց։ Համար 247։ փետր· 25։

*
* *

կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 276 առ պարոն Եփրեմ Ծատուրեան, որով յայտնէ նմա զիւրն գոհունակութիւն, առիս նուիրարերութեանն նորագոյն տեսակի լսմպայից ի գործածութիւն Գէորգեան ձեմարանի Մայր Աթոռոյս։ 2 Մարտ։

*
* *

կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 311 առ ազգայինս վարշավա քաղաքի որով յայտնէ թէ հաճութեամբ սրտի ընկալեալ է զգումարն 490 րուբլեաց, զառաքեալն ի նպաստ տուելոյ Տաճկա-Հայաստանի։ 10 Մարտ։

*
* *

կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 357 առ առաջնորդն վրաստանի և Իմերէթի Գէորգ եպիսկոպոս Սուրէնեան, որով յայտնէ նմա զկարգադրութիւն վարդապետի ի նախանգամութիւն կոնսիստորիային Տփխեաց և ի վանահայրութիւն Սարգիս եկեղեցւոյն, ի տեղի Անանիա վարդապետի, որ պաշտօնիւ փոխանորդութեան փոխադրեցաւ Ախալցխա ըստ հրամանի նորին վեհափառութեան։ 17 Մարտ։

*
* *

կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 391 առ Գէորգ քահանայ Զաքարեան Եկատերինոդար քաղաքի, որով շնորհէ նմա իրաւունս կրելոյ սեաւ ծալկեայ վիրակ և կամիլաւկա անուանեալ գլխարկն թաւշեայ ի վարձատրութիւն անձնուէր ծառայութեանց իւրոց և ըստ թախանձանաց ժողովրդեան։ 25 Մարտ։

*
* *

կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 409 առ Գրիգոր քահանայ Մատինեան, միաբան Կաթուղիկէ եկեղեցւոյ Տփխեաց, որով շնորհէ նմա իրաւունս կրել զգլխարկն կամիլաւկա ի տրիտուր ազգօգուտ վաստակոց և ըստ խնդրանաց ժողովրդեան։ 29 Մարտ։

*
* *

կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 445 առ Գրիգոր քահանայ Տէր Բարսեղեան, միաբան ս. Աստուածածնի եկեղեցւոյ Բեթհեհեմի Տփխեաց, որով շնորհէ նմա զպատիւ Ւազագ քահանայութեան ի տրիտուր հաւատարիմ ծառայութեանց նորա ըստ վկայութեան և միջնորդութեան Գերաշնորհի տեղւոյն։ 6 ապրիլ։

*
* *

կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 46 առ վիճակային կոնսիստորիային վրաստանի և Իմերէթի, որով թոյլ տայ կանգնել զմեհեան ի վերայ շիրմի հանգուցեալ Մկրտչի Սանասարեան, ըստ նկարին մատուցանելոյ ի Գէորգայ Եւանգուլեանէ։ 17 յուն։

*
* *

Կոնդակ օրհնութեան վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 315 առ Պատ. ազգային Եկատերինոդար քաղաքի, որով գովէ զնոսա սակս նուիրաբերութեան 520 րուբլեաց յօգուտ սովելոյ Տաճկահայաստանեայ։ Մարտի 10։

*
* *

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ընդ համարաւ 455 առ կոյս Հռիփսիմէ Թայիրեան, որով յօժարութեամբ սրտի տայ նմա իրաւունս դիմել առ բարեպաշտ Տիկնայս և բաւանալ զկամուտր նուէրս ի պայծառութիւն գերահռչակ վանիցն Սրբոց Յակոբեանց որ յԵրուսաղէմ։ 16 Նոյեմ. 1863 ամի։

ՔԱՂՈՒԱԾՔ Ս. ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ*.

17. Յունուարի. Սինօդն Ս. Էջմիածնի լուսոյ Նորին վեհափառութեան ս. Կոնդակն ի 11 յունուարի Թ. 18, որով Նորին Օծութիւնն հրամայեց արձակել վանական կառավարութեան նախկին անդամոց, որոնց պաշտօնավարութեան ժամանակը լրացած էր, և նոցա տեղը կարգել ի պաշտօն նախագահի Դեր. Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանին և անդամներ բարեշնորհ Անտօն վ. Պարպալեանին, արժ. Թադէոս արեղայ Առաքելեանին և շնորհ. Յուսիկ սարկ. Զոհրապեանին։ Ըստ որում Նոր Վիրապի վանահայր կարգել բար. Հմայեակ վ. Տէր-Յարգսեանին, կարմիր վանքը—բար. Վահրամ վ. Սկսունեան։

Ս. Սինօդը նոյնպէս Նորին վեհափառութեան հրամանի իրագործումը։

—

24 յունուարի. Սինօդն Ս. Էջմիածնի ըստ յայտարարութեան կոնսիստ. Հայոց Արցախի ի 4 Սեպտ. 1893. Թ. 1273, որով խնդրում է վաւերական համարել Առաջնորդի Սուրբ Յարութիւնեանի պսակը խնամութեան հինգերորդ աստիճանի մէջ, հրաժարեց վաւերական ճանաչել ըստ բարձր բարեհաճութեան Նորին վեհափառութեան։

—

26 յունուարի 1894։ Սինօդն Ս. Էջմիածնի հիմնուելով Աստրախանի կոնսիստորիայի ի 22 Դեկտ. անցեալ ամի Թ. 2633 միջնորդութեան վրայ, հրամայեց Թոյլ տալ երեցփոխանին ս. Աստուածածնին աւագ եկեղեցւոյ՝ ծախսել եկեղեցական դրամից 600 ռ. դիակառք պատրաստելու համար։

—

Սինօդն Ս. Էջմիածնի ըստ յայտարարութեան կոնսիստորիային Բեսարաբիոյ ի 7 Դեկտեմբերի 1893 ամի Թ. 2518, Թոյլատրեց նորան՝ համաձայն խնդրանաց մեծ. տուտուլիարնիյ սօվետնիկ Սերովբէի Դ. Միսեբեանց Սիմֆերոպոլցւոյ՝ ընդունել յիշեալ բարերարի նուիրած երկու տունն՝ արժողութեամբ 5500 ռ. ի սեփականութիւն ս. Աստուածածնին եկեղեցւոյ Սիմֆերոպոլ քաղաքի։

—

16 փետրուարի. Սինօդն Ս. Էջմիածնի ըստ յայտարարութեան կոնսիստ. Հայոց Տփղիսի ի 19 յունիսի 1891 ամի Թ. 2170 Խաչատուր Ա. Վարդանեանց՝ Մշուշ գաւառի Շնեատ գիւղացւոյ կրկնամուսնութեան համար, որով վերջինս փոխել է իւր անունն ի Խաչատուր Յուսիկեան Տէր Գալստեանց, պսակուել է 1877 Թուին Չաւարթարցի Համբարձումի Աւետիքի Հոփսիմէ անուն 15 տարեկան դըստեր հետ և 1888 Թուին Թողելով իւր ամուսնուն, հեռացել է իւր Հայրենիքն և վերըստին պսակուել համագիւղացի օր. Պասէ Յակոբեանի հետ իբրև ամուրի ոմն, որի հետ ապրում է և այժմ դրեթէ խելագարութեան վիճակում, ինչպէս վկայում է Տարոնի առաջնորդը 7 Մայիսի 1891 ամի Թուով 451.— հրաժարեց դրել Ամենապատիւ Պատրիարքին Կ. Պոլսոյ և անվաւեր հրատարակել յիշեալ անձի ապօրինի պսակն և ձգել նորան օրի-

* Բոլորովին մասնաւոր հանգամանքներ մինչև այժմ խանգարեցին պաշտօնականների հրատարակութիւնը։

նական պատժի տակ։ Իսկ խելագարութեան համար ուղարկել բժշկի վկայական, որպէս զի նորա օրինաւոր կնոջ Հռիփսիմէի խնդիրը տեսնօրինուի։

—

16 փետրուարի։ Ամենօղն Ս։ Էջմիածնի հիմնուելով Տփղիսի Հայոց կոնսիստ։ յայտարարութեան վրայ ի 29 Ապր։ 1892 ամի թ։ 1379 Աջաջուրցի Գէորգ Տէր Սարգսեանի ամուսնական խնդրի վերաբերմամբ, որով վերջինս պատճառելով իւր այրական անկարողութիւնն, խնդրում է ազատ կացնել զինքն ամուսնական կապից։ սակայն ի նկատի առնելով բժշկական վկայականն, ըստ որում իւրաքանչիւր տակաւին կարող է օրինաւոր կենցաղավարութեամբ և բժշկական օգնութեամբ վերականգնել իւր այրութիւնն, որի համար պատճառ է եղել ինքն, — Հրամայէց մերժել այդ խնդիրը, յայտնելով նորան այդ վճիռը կոնսիստորիայի միջոցով։

—

16 փետրուարի։ Ըստ ս։ կանոնակի Նորին Վեհափառութեան տուեալ 3 փետրուարի թ։ 102, Ամենօղն Ս։ Էջմիածնի իւր օրագրութեամբ կարգադրեց նշանակել նախանդամ կոնսիստորիային Հայոց Շամախու և վանահայր Սաղիանի վանքի բարեշնորհ Մակար ծ։ վ։ Բարխուդարեանին, իսկ նոյն վանքի վանահայր Սաեփ։ վ։ Տէր Գրիգորեանին միաբան ելնելակի վանքի, Արսէն վ։ Ղազեանին նոյն վանքի միաբան և ըստ հրամանին Նորին Ծութեան բացուելի վանական դպրոցում՝ ուսուցիչ, այլ և յանձնել վանահօրը վերջնոցս աջակցութեամբ կարգաւորելու յիշեալ վանքի անտեսական հարստատ եկամուտի գործերըն և հոգալ դպրոցի բոլոր պիտոյքները։ Իսկ Նուխուոյ փոխանորդ բարեշնորհ Յովսէփ վ։ Իսարագեանին տեղափոխել ի Թելեթ վանահայրական պաշտօնով։ Եւ որովհետև նորա տեղը նշանակուած սրժ։ Ղևոնդ վ։ Յովակիմեանը Թախտանձագին խոստովանելով իւր անկարութիւնը՝ զՄութիւն զտաւ Նորին Վեհափառութեան խնամածութիւնից, ուստի փոխանորդ ուղարկուեց Նուխի բարեշնորհ Սահակ վ։ Բաղդասարեանը Ս։ Ամենօղի առաձին օրագրութեամբ ըստ բարեհաճ կամաց Նորին Սրբութեան։

—

17 փետրուարի։ Ամենօղն Ս։ Էջմիածնի ըստ յայտարարութեան դործակալին Նոր-Բայազիտի 31 Հոկտ։ 1893 ամի, թ։ 499, կարգադրել խնդրել Երևանի նահանգապետից արգելել Մալրայ, Զոթ, Տաշկեանդ և այլ գիւղերի պարսիկ բնակիչներին, որ ձեռնամուխ չլինին Հայոց վանքերի, եկեղեցիների, գերեզմանատների և եկեղեցական աւերակների հնութեանց։

—

18 փետրուարի։ Ամենօղն Ս։ Էջմիածնի նկատի առնելով Ներքին Գործոց Նախարարի յառաջադրութիւնն ի 21 յունուարի թ։ 22, հրամայեց կոնսիստորիային հաշտարարանի առնել իւր տեսչութեան տակ Անդրկասպեան երկրի եկեղեցական վիճակի գործերն, և շահմանել Առաջնորդին և կոնսիստորիային, որոց տեսչութեան տակ էր այդ վիճակը, ծանուցանել այդ կարգադրութիւնը։

—

26 Մարտի 1894։ Ամենօղն Ս։ Էջմիածնի նկատի առնելով Տփղիսի Հայոց կոնսիստորիայի յայտարարութիւնն, 31 յունուարի թ։ 376, որով խնդրում է յարգել Օքրոպակերտ գիւղի ծխական դպրոցի հոգաբարձութեան խնդիրն և թոյլատրել հաւաքել կիւրակէ օրերը նոյն տեղի եկեղեցում դանձանակ յօդուտ դպրոցի։ Ս։ Ամենօղը տեսնելով որ արդէն եկեղեցու ղրամագլխի տոկոսիքը սրուում է դպրոցին, նոյն կոնսիստորիայի միջոցով հրամայեց մերժել նորոդ պահանջները։

—

26 Մարտի։ Ամենօղն Ս։ Էջմիածնի ի նկատի ունենալով Երևանի բարեգործ։ ընկերութեան տեղական ճիւղի դրութիւնն յայտնուն Նորին Վեհափառութեան ի 18 փետր։ թ։ 27, ըստ բարեհաճ հրամանին Նորին Ծութեան հրամայեց Մայր Աթոռոյս գան-

ձապահին ուղարկել առ նոյն ընկերութեան վարչութիւնն 339 ռուբլի գումարըն, որ ժողովուած էր յօգուտ սովելոց Երևանայ նահանգի։ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց և իւր կողմից նուիրել նոյն նպատակով 200 ռուբլի, որով կը լինի ամբողջ գումարը 539 ռուբլի։

—

26 Մարտի։ Սինոդը Ս. Էջմիածնի ի նկատի առաւ Երևանի կոնսիստորիայի յայտարարութիւնը Մարտի 9-ից 440 թուով, որով խնդրում է խզել կարապետ Մելիք Էյնաթեանի և Շուշանիկ Տէր Պետրոսեանցի ամուսնութեան կապը, պատճառելով թէ ահա 4 տարի է, որ զոքա անջատուած են իրարից, քան որում և յառաջադրում է մանրամասն նկարագրութիւն հանգամանաց։

Ս. Սինոդը քննելով բոլոր տեղեկութիւնք և չգտնելով ոչ մի օրինական պատճառ խզելման, ահա՝ հետևեալ մերժել։

Նորին Վեհափառութիւնը հաստատեց Ս. Սինոդի այս սահմանածը։

—

28 Յունուարի։ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց ուղարկել Ս. Սինոդին հետևեալ ս. կոնդակը.

«Մկրտիչ Յառաջ Յիսուսի Քրիստոսի.... Ջկնի յաջողութեամբ Ամենակարողին Աստուծոյ ամբառնալոյ մեր ի գահ Հայրապետական՝ անհրաժեշտ համարեցաք հասու լինել նաև վիճակի տնտեսութեան Մայր Աթոռոյս և հոգալ վասն կարևորացն։ Ըստ այսմ և առեալ ի նկատ զտեղեկագիրս եղեմից Մեծի Տանս և տեսեալ զեղանակ ստուգութեան գումարաց գանձարանի և զկարգ գործադրութեան այնոցիկ՝ Տնտեսութիւնն երևեցաւ Մեզ կարօտ որոշ իմն հրահանգի և բարեփոխութեան։ Ջընդհանուր հրահանգն վասն տնտեսութեան թողլով տալ յայտագային՝ առայժմ բարւոք վարկաք տալ կարժել միայն զնախահաշիւ եղեմից Աթոռոյս վասն այսր 1894 ամի համեմատութեամբ եղեմից անցեալ 1890—1891, 1892 և 1893 ամաց, զոր և հաստատեալ առաքեմք ի Սինոդդ և պատուիրեմք. նախ՝ անյապաղ տալ վանական կառավարութեան, վարչութեան շեմարանի, Տպարանական ժողովոյ և Տնտեսի վեհարանի, յոր պաշտօն առժամանակ կարգեմք զպահակ Ս. վ. Ալվատեան, զառանձին առանձին տումարս՝ վասն գրելոյ յայնոսիկ զմուտս և զծախս ըստ իւրաքանչիւր տեսչութեան, համեմատ նախահաշուոյն։ Երկրորդ՝ զօրինակ այնր նախահաշուոյ յղել առ գանձապահն Սինոդի, զի ունիցի ի նկատի և ըստ այնմ յամենայ ամիս տացէ զգրաման այնոցիկ վարչութեանց՝ համաձայն գրաւոր պահանջանաց նոցա։ Երրորդ՝ տալով վարչութեանցն զպատշաճաւոր քաղուածս ի նախահաշուոյն վերաբերեալս իւրաքանչիւր ումեք ի նոցանէ, պատուիրել զի զհարկաւորեալ գրամն յետ ընդունելոյ ի գանձարանէ գործադրեսցին կարի խնայողութեամբ, արձանագրելով ի տումարան և վաւերացուցանել տալով զյօգուտածըս ծախուց, որոց արժան իցէ, զգուշանալով՝ զի յաւելուածք ի ծախուց որոշելոց ուրոյն ուրոյն յօգուտածովք նախահաշուոյն մի՝ գործադրեսցին յայլ պէտս և կամ ի լցուցանել զպակասորդս ծախուց այլոց յօգուտածոց առանց գրաւոր թոյլտուութեան Ս. Սինոդի։ Չորրորդ՝ հանել հրաման վանական կառավարութեան, զի տացէ միւսոց պաշտօնէից Տնտեսութեան, այն է՝ Մառանապանի, Շեմնարանապետի, Շորապանի, Տնտեսի, Հիւրընկալի և վերակացուի ագարակի ընդնպիսի ժապաւինեալ տումարս, հսկելով գործոց նոցա և ճշդիւ կիրառութեան գրամոց և այլ ամենայն իրաց, և յամենայ ամիս յետ ստուգելոյ զտումարս նոցա՝ զերևելոցն արձանագրեսցէ յայնս, և ի վախճան տարւոյն զընդհանուր համառօտ տեղեկագիրն մատուսցէ Մեզ և Սինոդիդ։ Հինգերորդ՝ յայտնհետ, յընդունել Սինոդիդ զգրամն՝ նոյն ժամայն գրել ի մուտս տումարաց Ատենիդ և գանձարանին և տալ որոց անկ է՝ զտալեալ ընկալագիրս, և ի սկզբան իւրաքանչիւր ամենայ ստուգել զտումարս մերից ոչ միայն համեմա-

Ծամի Փրկչին 1894, 28 Յունուարի և ըստ Տումարի ՌՅԽԳ.

Ա Ր Ա Ր Ա Տ

Ա Մ Ա Ո Ւ Ի Ս Ի Ն Ի Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ։

Թ· 111·

Իսկականի վրայ ստորագրած է՝

ՄԿՐՏԻՉ ԿԻԹՈՒՂԻԿՈՍ
Ամենայն Հայոց։

Ս· Մինոդն ի 4 Փետրուարի և ի 4 Մարտ
կազմած օրագրութեամբք որոշեց կատարել
Նորին Օծութեան ս· Կոնդակն ըստ ամենայ
նի։

ԻՄԱՍՏԱԼԻՑ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ·

— Ձայները չափաք է, համրուին, այլ կշռուին։

— Աղաւութեան ոգին, օրհնքները սիրելն է։

— Շահասիրութիւնը ամեն լեզուն ալ կը խօսի և ամեն դերն ալ կը խաղայ, մինչև իսկ անշահասիրութեան լեզուն ու դերն։

— Յիմարը կը պաշտպանի մոլորութիւն մը, մէկ այնպիսի մարդու յանդուգն անձնասպանութիւնով, որը որ երբէք չխնայուիր· իսկ իմաստունը ընդհակառակն կը հաստատէ ճշմարտութիւն մը, մէկ այնպիսի մարդու զգուշութիւնով, որը որ կրնայ սխալուիլ։

— Թանկագին է մեղ բարեկամը, սակայն թշնամին էլ մեզ կօգնէ· բարեկամը ցոյց կուտայ մեզ թէ՝ ի՞նչ կրնամք ընել· իսկ թշնամին կը սորվեցնէ մեզ թէ՝ ի՞նչ պէտք է ընենք։

առութեամբ այնոցիկ տումարաց, այլ և ար-
մատոց ընկալագրոցն և որ առաւել կարևորն
է՝ իսկական թղթոց, որովք առաքեալ են
ղրամք, և ղայնս կարգաւ դասաւորեալ ի մի
ունել ի պատրաստի· իսկ ղյօդուածս ծա-
խուց ստուգել գրութեամբք, որովք ըստ նա-
խահաշուոյն պահանջեալ են ի Գանձարանէ
ղրամք, և ստորագրութեամբք ընդունողաց
այնոցիկ։ Վեցերորդ՝ հարկ ի վերայ կայ Մի-
նոդիդ նախահոգ լինել, զի բաց ի սովորական
ստուգութենէ Գանձարանի, այլ և ի ձեռն
երկուց կամ երից անգամոց Դորին յամոյ
ամիս անխափան գինեսցին տումարք ծախուց
Վանական կառավարութեան, Ջեմարանի և
Տպարանի, պահանջելով միշտ զգրաւոր ա-
պացոյցս ծախուց և զվիճաղութիւնս իւրեանց
գրելով ի նոյն իսկ տումարս՝ զարդեանցն
յայտնել Մեզ։ իսկ զծախս Վեհարանի Տըն-
տեսն նորին առնելոց է ըստ Մերոյ յանձնա-
րարութեան և գիտութեան։ Եօթներորդ՝
գինիչք տումարաց ունելով առաջի աչաց զօ-
գուտն Մայր Աթոռոյ՝ խորհեսցին ընդ տըն-
տեսական վարչութիւնս առ ի գտանել զհնա-
րըս հետզհետէ յատաւելոյ գաւելորդս ծա-
խուց որոշելոյ ի նախահաշուի, իսկ Մինոդ
պահանջելով ի ժամանակին զհասոյթս դիւ-
ղօրէից և կալուածոց, զպագարիկս գնոց վա-
ճառելի գրոց, «Արարատ» ամսագրոյ և զայլս
ամենայն՝ փոյթ կայցի արդիւնաւորել զեկա-
մուտսն առհասարակ և զծախսն առնել դէթ
ըստ նախահաշուոյն և ոչ բնաւ աւելի։ Իսկ
յորժամ անակնկալ ինչ դէպք սոխակեսցին
առնել զծախս արտաքոյ սահմանեալ նախա-
հաշուոյն, յայնժամ իւրաքանչիւր Տեսչու-
թիւն պարտի դիմել առ Մեզ և խնդրել
ղանօրհնութիւն։ Եւ ութերորդ՝ Մինոդ այժ-
մէն իսկ հարկ ի վերայ դնէ վերոյիշեալ տըն-
տեսական վարչութեանցդ, զի յայսմհետէ ուշ
դիցեն ի վերջին ամիսս իւրաքանչիւր ամի
զգուշաւոր նախահոգութեամբ և ճշգութեամբ
կազմել զնախահաշիւ մահոյ և ելից իւրեանց
հանդերձ մանրամասն ցուցակաւ և մատուս-
ցեն Մեզ վասն կազմելոյ միաբան խորհրդով
նոցին զընդհանուր նախահաշիւ և ապա
յետ հաստատութեան Մերոյ, ի գործադրու-
թիւն ի ձեռն Մինոդիդ։ Եւ քանզի առ չնա-
րելոյ այլ և այլ հանգամանաց և սպութեա-
ժամանակի՝ կազմութիւն նախահաշուոյս թո-
լեւս չլինի ճշդած ի թերութեանց, սակայն ա
րեմք յուսալ, զի յայսմհետէ փորձն օրըստօ
լեական ուսուցցէ Մեզ լնուլ զթերին յա
պագային։

Ա Զ Գ ։

ՏՊԱՐԱՊՆԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է այն բոլոր վաճառականներից և գործակալներից, որոնք ցարդ չեն ուղարկել Ներկայ Թուականի «Էրարատի» բաժանորդագրութեան արժէքը, բարեհաճեն շուտափոյթ ուղարկել։

Ընդ և խնդրում է մինչ Ապրիլ ամիսը յետ ուղարկել տպարանին, 1894 անվաճառ մնացած օրացոյցները։ Հակառակ դէպքում պատասխանատու կլինեն իշխանութեան առաջ։

«ԱՐԱՐԱՏ»Ի ՍՐԲ։ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ

Յիշեցնում ենք, որ «Էրարատ»ը տանալուն պէս իսկոյն և եթ հասցնեն բաժանորդներին, որոնցից յաճախ գանգատներ են գալիս։ Յոյս ունենք, որ այսուհետև այդպիսի գանգատութիւններ չեն կրկնուիլ։

Ա. ՏԷՐ ՄԻՔԷԼԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Արտատպած «Արարատ»ից)

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

1893

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ

Այն անձանց, որոնք յաճախակի պիտի հարցնեն թէ իմ «ԴԱՍ ՏԵՏՐ ԿՐՕՆԻ» աշխ. և գ. տարիների համար կազմած կրօնի գասագրքերը թոյլատրուած են արդեօք հոգևոր իշխանութիւնից, պարտք եմ համարում յայտնել, որ ի 28 փետրուարի 1894 ամի № 262, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ բարեհաճել է հրամայելու վերոյիշեալ գրքերը մուծանելու ի շարս այն դասագրքերի, որոնք գործ են ածում մեր կեղծբարեան դպրոցներում։

Մեսրոպ Մոշեան ՍԱՀԱԿ ԳԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

1—2

Յայտնում եմ ի գիտութիւն

ՄԵԾ. ԵՐԵՑՓՈՒԽԱՆՑԻ

որ պատրաստում եմ նկարներ գլխարկների համար ընտիր իմպաներկ նկարներ կտաւի վրայ, արժան և ճեռնտու գներով. պատուէր տուողները պէտք է յայտնեն ցանկացած նկարի մեծութիւնը։ Ցանկացողները թող բարեհաճեն դիմել ինձ հետևեալ հասցէով

Վաղարշապատ (ուսումնարանի) նկարիչ Ա. ՍԱՓՈՆԵԱՆ։

ՕՐԱՑՈՑ
1894
Ա Ր Ա Ր Ա Տ
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱՒ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ

ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ

ԳԻՐՔԸ

ԴԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Յանկացողները բարեհաճեն դիմել Մայր Էջմիածնի Տպարանական Վարչութեան.

Յայտարարութիւն.

Արդէն վաղուց ի վեր ժողովել և ժողովում եմ Հայոց ազգային, ժողովրդական երգեր և պարեր, նաև եկեղեցական հոգեւոր երգեր, տաղեր և մեղեդիներ, (Ս. Էջմիածնի հին եղանակով): Խնդրում եմ իմ ուսուցիչներին և բանասէրներին, որ ինձ օգնեն այս գործում: Ելրոպացիք գաւառի մէջ յայտնի երգիչների երգածները, մե՛ծ զգուշութեամբ երանակներն առանց ՓՈՓՈԽԵԼՈՒՆ, ՆՈՅՆՈՒԹԵԱՄԲ ձայնագրել Հայ կամ Եւրոպական նօտաներով և ուղարկել ինձ: Ամեն 10 հատ ժողովրդական երգ ուղարկողը, ձրի տպած կստանայ մի օրինակ «ՓՆՏԻ ԱԶԳԱՅԻՆ» երգարանից, որ պիտի հրատարակուի շուտով Հայոց և Եւրոպական նօտաներով՝—առանձին առանձին: Դիմել ինձ հետևեալ հասցէով: Москва, Мясницкая, домъ Ермаковыхъ М. Бархударову. Передать свящ. Газаросу Овсепьянцу. 2—3

Եկեղեցական ամ[illegible]ններ ընտիր աստղնագործ և հաստակ՝ բուն Հայկական ձաշակով, Սաղաւարտներ, վահաններ, գօտիներ, շուրջառներ, փորագրարներ, եպիսկոպոսական թագեր, եմիփորոններ, Աբրահամբարներ, գաւազանի և սկիհի քղեր, Սարկաւագի ուրարներ, Ս. Սեղանի սփռոցներ, հոգեթափեր, Ամպհովանիներ, Խաչվառներ, Նշխարքի տիպեր, և այլն և այլն: Առաջարկւում է պատրաստի և համաձայն պատուէրի պատրաստելու թէ նորերն և թէ հնամնները նորոգելու ամենագիւրահասկելի գներով. բամմամեայ փորձառու, և պարգևատրուած գովասանական թերթով կովկասեան ցուցահանդէսից Տփղիսու: Պատուէր ուղղ ցանկացողներին խնդրում ենք դիմել այս հասցէով: Въ Тифлисъ, Банковскій переулокъ, домъ Генерала Депаякина № 12 Священнику Симсону Абраамянцу